

327(43)

4-70

Ռ. Պ. Կոմսյանի յանձն

ԱՐԵՎՄՏԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ
ՄՈՆՈԴՈՒԼԻԱՆԵՐԻ
ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱ

ԵՐԵՎԱՆ

1963

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
СЕКТОР ВОСТОКОВЕДЕНИЯ

Р. П. КОНДАКЧЯН

ВТОРЖЕНИЕ ЗАПАДНО-
ГЕРМАНСКИХ МОНО-
ПОЛИЙ В ТУРЦИЮ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1963

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԻՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԻԱՄԻԱ
ԱՐԽԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՆՏՐ

327(43)

4-70

Թ. Պ. ԿՈՆԳՎԱԿՉՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ
ՄՈՆՈՊՈԼԻԱՆԵՐԻ
ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ԹՈՒՐԿԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԻՐ ԳՐ ՀՐԱՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1963

Աշխատութեան մեջ բնութիւնն է անըզ-
գում Արեւմտեան Գերմանիայի մտնողութեան
կան կազմաւորի ներխուժումը Քուրբիաւ
Գրքույկը Հիմնականում ընդգրկում է երկրորդ
Համաշխարհային պատերազմի ավարտից հետո
մինչև 1960 թվականի մայիսի վերջը ընկած
ժամանակաշրջանը և Քուրբիայում անցի ունե-
ցած գինեգործական հեղաշրջումը: Գրքույկը
նախատեսված է ընթերցողների լայն շրջաննե-
րի համար:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԹՈՒՐԲՈՒ
ՆԵՐՆՈՒՎՄԱՆ ՊԱՏԻՄԱՌՅՈՒՆՆԵՐ

Գերմանական իմպերիալիզմի ներխուժումը
Արևելքի երկրներն ու Քուրբիան ունի իր պատմա-
կան անցյալը: XIX դարի 30-ական թվականներին
սկսած պրուսական սազմամուլ յունկերոթյունն իր
հայացքն ուղղեց դեպի Օսմանյան Քուրբիա:

Իմպերիալիզմի փուլը թևակոխելուց հետո
Գերմանիան իր գաղութատիրական պլաններում
սկսեց ավելի ու ավելի մեծ տեղ ու նշանակություն
հասկացնել Օսմանյան կայսրութեանը:

Վիլհելմ II կայսեր 1889 և 1898 թվականներին
Օսմանյան Քուրբիա կառարած այցելութունները
«կեպի Արևելք» (Drang nach Osten) տխրահռչակ
քաղաքականութեան բացահայտ դրսևորումն էին:
Մուսուլմանական ժողովրդներին սիրաշահելու
կոպտակով, գերմանական կայսրը Գամաակոսում
սուլթան Սալադինի զամբարանի սուղի բարձրակուշ
հայտարարեց, «Քող սուլթանը և երեք հարյուր մի-
լիոն մուսուլմանները, որոնք ի զեմս սուլթանի
հարգում են իրենց խալիֆին, համոզված լինեն, որ

գերմանական կայսրն ամենուրեք ու ամեն ժամանակ կլինի նրանց բարեկամը»¹։

Հենց այդ ժամանակ գերմանական խմբերիալիզմը առաջ քաշեց Բեռլին-Քաղզաղ երկաթուղային ճանապարհի շինարարության սլանք, նպատակ ունենալով այդ միջոցով տարածել իր ազդեցությունը ամբողջ Մերձավոր արևելքում, ինչպես նաև դուրս դալ գնդի Հնդկական օվկիանոս։

Վ. Բ. Լենինը, բացահայտելով Արևելքի երկրներն իմպերիալիստական պետությունների ներխուժման բուն դրդադատաճանաչը, «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստadium» աշխատության մեջ գրում է. «Այս հետամնաց երկրներում շահույթը սովորաբար բարձր է, որովհետև կադրիտայինը քիչ են, հողի դինք համեմատաբար մեծ չէ, աշխատավորքը ցածր է, հում նյութեղանները էժան են»²։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Գերմանիան արդեն շոշափելի դիրքեր ուներ Թուրքիայի էկոնոմիկայում, պետական ապարատում և բանակում։ Այստեղ գործում էին 60 գերմանական բանկեր և բանկային գրասենյակներ («Deutsche Bank», «Deutsche-Orient Bank», «Deutsche-Palestina Bank» և ուրիշներ)։

¹ *Г. Н. Копчев, Турецкое наследство и мировая война, Петроград, 1917, стр. 68.*

² Վ. Բ. Լենին, *Ընտրյալ երկեր, 1951, հատ. 22, էջ 318.*

Գերմանական մոնոպոլիաներին էին պատկանում Ադանայի ու Էրիզլիի ածխի հանքերը, Ալեքսանդրեապոլիսի նավահանգիստը, Ադանայի դաշտավաչրի ռոսգիշ սիստեմը և մի շարք ուրիշ մեծ ու փոքր արդյունաբերական ձեռնարկություններ։ Գերմանական մոնոպոլիաները սկսել էին ներթափանցել նաև երկրի գյուղատնտեսության մեջ, նրանք ստացան Օսմանյան կայսրության տերիտորիայում գյուղատնտեսական գաղութներ կազմակերպելու իրավունք։ Այսպիսի գաղութներ հիմնվեցին Պաղեստինում, Բլովի հինգը, որոնք սենեին 624 գերմանացի վերջարնակիչներ³։

Այդ ժամանակ Կոստանդնուպոլսում գերմաներեն լեզվով թերթ էր լույս տեսնում։ Գերմանիայի սպիտակաշորները և ռուսական թուրքական բանակի վրա։ Թուրքական կառավարության հրավերով⁴ բանակի վերադիման համար Թուրքիա ժամանեց գերմանական զինվորական միասն՝ զենեքալ ֆոն գեր Գուցի գլխավորությամբ, իսկ հետո՝ գերմանական զենեքալ Կիման ֆոն Սանդերսը։ Վերջինը փաստորեն ամբողջությամբ իր ձեռքը վերցրեց Օսմանյան կայսրության զինված ուժերի հրամանատարությունը։ Կիման

³ *В. А. Кряжин, Национально-освободительное движение на Ближнем Востоке, М., 1923, стр. 12.*

⁴ *P. Baudin, La Turquie et les Ottomans, Paris, 1896, p. 106. Ընդգրկված մերն է — Թ. Կ. 1.*

Ֆոն Սանդերսի միտիայի գործունեությունը թուրքական բանակում հանդիսացավ առաջին համաշխարհային պատերազմին՝ Գերմանիայի օգտին Օսմանյան կայսրության մասնակցելու պատճառներից մեկը:

Ինչպես Վ. Ի. Լենինն էր գրում 1917 թ. սկզբում «Գերմանիան այս բովելիս Թուրքիային վերածել է իր քե՛ն՝ ֆինանսական, քե՛ն՝ ուղղմական վաստի»⁵:

Գերմանական իմպերիալիզմի քաղաքականությունը Թուրքիայում ու թուրքական կառավարողներին՝ «երիտասարդ թուրքերի»՝ գերմանասիրական քաղաքականությունը երկիրն ու նրա ժողովրդին կանգնեցրեց ազգային կործանման անդունդի ստալ: Օսմանյան կայսրությունն իր պատմության մեջ շտեմնված պարտություն կրեց ու զաղարեց գոյությունն օժենալուց:

Թուրքիան ազգային կործանումից փրկվեց: Թուրք աշխատավոր մասսաների՝ երկրի ազատության ու անկախության համար մղած անձնվեր պայքարի շնորհիվ, ստեղծվեց նոր պետական ձև՝ բուրժուական ռեսպուբլիկա: Այդ կատարվեց միայն ու միայն Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռեվոլյուցիայի ամենահաղթ զազափարների ազդեցության տակ:

Առաջին համաշխարհային պատերազմում

կրած պարտության պատճառով Գերմանիան կորցրեց իր նախկին զիրքերը գաղութներում և ուրիշ վայրերում, ինչպես նաև Թուրքիայում: Թուրքական ռեսպուբլիկայի կառավարությունն անցավ ետափոխման՝ պետական կապիտալիզմի քաղաքականության ու սկսեց հստակ բուրժուարներից, այդ թվում նաև գերմանական մոնոպոլիստական կապիտալին պատկանող ձեռնարկությունները՝ 62 միլիոն թուրքական լիրա (այսուհետև թ. լիրա—թ. կ.) ընդհանուր գրամագիտով՝: Մակայն համեմատաբար կարճ ժամանակամիջոցից հետո Գերմանիան վերականգնեց իր նվաճողական ակտիվ քաղաքականությունը Թուրքիայում:

1928 թվականին Թուրքիա այցելեց Գերմանիայի էկոնոմիկայի միտիտոր ու կայսերական բանկի զիրենկտոր Շախտը, որը մշակեց Թուրքիայի տնտեսության վրա զիրիշխելու պլան: Այս պլանի էությունը հետևյալն էր. նախ և առաջ, բացառապես գյուղատնտեսական ապրանքներ ու արդյունաբերության համար հումք արտադրող Արևիկի երկրներում այդ ապրանքների արտահանումը դարձել էր անհրաժեշտություն: Երկրորդ, այդ երկրները չէին կարող սպասել առավել հարմար ժամանակի ու այդ ապրանքների պաշար

* R. Cenani, Foreign Capital Investments in Turkey, Istanbul, 1958, p. 10.

⁵ Վ. Ի. Լենին, Ընտր. երկեր, 1951, հատ. 23, էջ 235.

կուսակից ԱյնուՇեան, քանի որ այդ երկրների ֆինանսները թույլ էին ու եկամուտները քիչ, նրանք ստիպված էին այդ աղյուսակները վաճառել առանց հետաձգման, իսկ Գերմանիան ի վիճակի էր գնելու նրանց արտադրանքի մեծ մասը, այն է՝ կաշուն ու ալիկի բարձր գներով, քան համաշխարհային գներն էին: Սակայն գերմանական կապիտալի ներխուժումը Քուրթիա ուժեղացավ հատկապես Գերմանիայում ֆաշիստական կարգեր հաստատելուց հետո: Ճիշտ է, թեև գերմանական մոնոպոլիստական կապիտալը Քուրթիայում անցկացվող ետաթիզմի քաղաքականությունն պատճառով գրկված էր ուղղակի կապիտալ ներդրումներ կատարելու հնարավորությունից, այնուամենայնիվ մի շարք գերմանական ֆիրմաներ ստացան արդյունաբերական ձեռնարկությունների, էնկուրաժաժանների, երթաթուղային ու ավտոմոբիլային ճանապարհների շինարարության պատվերները Այսպես, օրինակ՝ Ուշարում և Ալփուլուլում կառուցվող շարժարի գործարանների շինարարության համար գերմանական «Մաշինեն-Ֆաբրիկեն» էլուկաու Ռ. Վոլֆ Ս. Գ. ֆիրման Քուրթիային արամաղրեց համապատասխան սարքավորում և մասնագետներ: Նույն ձևով գերմանական ֆիրմաները տեսալի զործարաններ կառուցեցին էրեզ-

⁷ Yves Fanchon et Maurice Leruth, L'Allemagne et le Moyen-Orient, Paris, 1957, p. 14.

լիում, Մալաթիայում ու Բարբրոյում: Բայց սուսակց խոշոր արդյունաբերական կառույցը, որի շինարարությունն պատվերը ստացավ Գերմանիան, զա Կարաբոյոքի մետալուրգիական կոմբինատն էր: Վերջինիս շինարարությունը (1937—1939 թթ.) իրազորվեց Կրուպպի կոնցերնի նախազմով, սարքավորումով ու մասնագետների հսկողությամբ, բայց՝ անդլիական վարկի հաշվին:

Գերմանական մոնոպոլիստական կապիտալը ձգտում էր արդյունաբերական շինարարությունից ստացած իր շահույթների պակասը լրացնել տնտրական ներխուժման միջոցով: 1930—1933 թթ. ընթացքում Քուրթիայի ներմուծման մեջ Գերմանիայի բաժինը տարեկան աճում էր ընդամենը 2—3 տոկոսի շափով: Գերմանիայի արտահանումը Քուրթիա 1933 թվականին կազմեց 25,5 տոկոս՝ 1930 թվականի 18,7 տոկոսի դիմաց, իսկ ներմուծումը՝ 18,9 տոկոս, 1930 թվականի 13,1 տոկոսի դիմաց:

1933 թ. օգոստոսին երկու երկրների միջև կնքվեց առաջին կլիբեռալային առևտրական պայմանագիրը, որից հետո ֆաշիստական Գերմանիայի արտահանումը Քուրթիա սկսեց անել տարեկան 6—8 տոկոսով: Արդեն 1936 թվականին, Գերմանիայի արտահանումը Քուրթիա կազմում

⁸ Yves Fanchon et Maurice Leruth, ibid, p. 16.

էր վերջինիս ներմուծման 46,4 տոկոսը⁹, 1933—1936 թթ. բնթացքում աճում է նաև Գերմանիայի ներմուծումը Թուրքիայից, տարեկան 10—13 տոկոսի շափով: Այսպես օրինակ՝ 1936 թվականին Թուրքիայի արտահանման մեջ Գերմանիայի բաժինը կազմեց 51 տոկոս, իսկ 1938 թվականին՝ 43 տոկոս¹⁰: Չնայած այն հանգամանքին, որ 1938 թվականին գերմանա-թուրքական առևտուրը տոկոսային հարաբերությամբ վերցրած ավելի ցածր էր, քան 1936 թվականի մակարդակը, այնուամենայնիվ Գերմանիան զբաղում էր առաջին տեղը Թուրքիայի ներմուծման ու արտահանման մեջ: Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին Գերմանիայի բաժինը կազմում էր Թուրքիայի ներքին ու արտաքին առևտրի համարչա կենտր:

Գերմանիան իր ստրատեգիական պաշարները լրացնելու նպատակով Թուրքիայից մեծ քանակությամբ ներմուծում էր քրոմ, սլզինձ, երկաթ, բամբակ, բուրդ, ինչպես նաև մրգեղեն, հացահատիկ, ծխախոտ և ուրիշ ապրանքներ, իսկ Թուրքիա արտահանում էր արդյունաբերական սարքավորում, էլեկտրատեխնիկական ու տեքստիլ ապրանքներ և այլն: Հարկ է մասնավորապես շեշտել այն, որ գերմանական ֆիրմաները Թուրքիա-

լից ներմուծած գյուղատնտեսական ապրանքների որոշ մասը արտահանում էին ուրիշ շուկաներ և նրանց շահույթները զրոյանում:

Գերմանիան կարողացավ իր ազդեցությունը տարածել նաև Թուրքական բանակի վրա: Այդ տարիներին բանակի վերազինման ու սաղմական օրինակների կառուցման համար Թուրքական կառավարությունը գերմանական զինվորական մասնագետներ ճեղքեց¹¹: Միաժամանակ պետք է նշել, որ Թուրքական բանակի վերազինումն էլ հիմնականում կատարվում էր Գերմանիայից ներմուծված զենքի հաշվին:

Յաշխատական Գերմանիայի ազդեցությունը Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականության վրա սկսեց ուժեղանալ երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին: 1941 թվականի հունիսի 18-ին՝ Սովետական Միության վրա ուխտագրում կերպով հարձակվելու նախօրյակին, Գերմանիան Թուրքիայի հետ կնքեց պայմանագիր 10 տարի ժամկետով, որը վերջինին ներբաշեց Գերմանիայի ազդեցիվ արտաքին քաղաքականության հորձանուտի մեջ: Այդ նույն թվականի հոկտեմբերին երկու երկրների միջև ստեղծական նոր պայմանագիր կնքվեց, որի համաձայն Գերմանիան քրոմի հանքանյութի դիմաց

⁹ Yves Fanchon et Maurice Lerath, *ibid.*, p. 16.

¹⁰ Նույն աղբյուր, էջ 20:

¹¹ Aziz Hunki bey, *Turcs et Atatürk*, Caire, 1939, p. 87. Ընդգծումը մերն է.—Ռ. Կ.:

Թուրքիա պետք է արտահաներ սրողպատ և սազմական հանդերձանք:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում Թուրքիան Գերմանիային մատակարարում էր մեծ քանակությամբ դյուղատնտեսական հումք և հանքային հանածոներ: Գերմանիան ուղադրություն էր դարձնում հատկապես բրոնի հանքանյութի ներմուծմանը:

Գերմանա-թուրքական առևտուրը, որը 1940 և 1941 թվականներին բավականաչափ բնկել էր նախորդ տարիների համեմատությամբ [11,9 տոկոս և 12 տոկոս Թուրքիայի ներմուծման մեջ և 8,7 տոկոս ու 21,8 տոկոս արտահանության մեջ], 1943 թվականին հասավ 38,1 տոկոսի՝ ներմուծման և 23,7 տոկոսի արտահանության մեջ¹²: Գրանից հետո գերմանա-թուրքական առևտուրը նորից բնկավ:

Թուրքիայում իրենց հառնդուն գործունեությունն էին ծավալում նաև գերմանական, հատկապես Գերմանական-ալեկսյան և Գերմանական-Հոլանդական բանկերը:

Յաշխատական Գերմանիան Թուրքիայում վերջինիս պատերազմի մեջ ընդգրկելու նպատակով լայն պրոպագանդա էր ծավալում:

Պատերազմի ժամանակ այստեղ գործում էին գերմանական փեյ հեռագրական գործակալու-

թյուններ, որոնցից երկուսը՝ «Տրանսիտնտինենտ պրեսուր» և «Նախրիխտեն պրեստդինենտսը» հրատարակում էին ամենօրյա բյուլետեններ Անկարայում, Ստամբուլում, Իզմիրում և Էրզրումում¹³: Թուրքիայում Գերմանիան հրատարակում էր «Թյուրքիչե պոստ» թերթը ու իր հակողության տակ էր պահում Ֆրանսերեն լեզվով լույս տեսնող «Լը Բեյպլուս» և «Մոսթանբուլ» թերթերը: Այստեղ տարածվում էին նաև «Ֆուլիչե բեռբախտեր» և «Ալգեմաչին ցալտունգ» թերթերը:

Պատերազմի սկսիստղի ստեղծման ու Գերմանիայի ժամանակավոր սահմանական հաջողությունների փառաբանման գործում գերմանական մամուլից հա չէր մնում Ստամբուլում դանվոլ նաև «Տևտոնիա» ակումբը:

Պատերազմի ընթացքում Թուրքիայում էին գտնվում մեծ թվով գերմանական դինվորական հրահանգիչներ, որոնք գինվորական կցորդ զենբուայ Ռոզելի ու ծովային կցորդ ծովակալ Մարվիցի գլխավորությամբ թուրքական բանակը պատրաստում էին ռազմական գործողությունների: Գերմանական գործակալներն ուղղակի վիստում էին սովետա-թուրքական սահմանի վրա և երկրի աերիատորիան օդատարծում հակասովետական գործողությունների համար:

Նրանք սերտ կապեր հաստատեցին նաև

¹² Yves Fanchon et Maurice Leruth, ibid, p. 21.

¹³ Yves Fanchon et Maurice Leruth, ibid, p. 30-31.

պանթուրքիստական տարրերի հետ, որոնց օգտագործում էին Սովետական Միության դեմ քայքայիչ գործունեություն ծավալելու ուղղությամբ:

Ճաշխատական Գերմանիան ջանք չէր խնայում Քուրքիային Սովետական Միության դեմ պատերազմի մեջ ներգրավելու համար: Այդ նպատակով ֆոն Պապկեյը Քուրքիային խոստացավ Սովետական Հայաստանը և Սովետական Ազրբեջանը ու Բրիտանական կայսրության օչուցալի կտորները¹⁴: Քուրքական կառավարողներն էլ իրենց հերթին հաճոյարար կատարում էին զերմանական զենսպանությունից ստացվող բոլոր ցուցումները, որովհետև զրանք համապատասխանում էին նաև իրենց նպատակներին: Քուրքիայի կառավարող շրջանները հույս ունեին, որ Գերմանիայի հաղթանակի դեպքում իրենց կհաջողվի հետ գրավել Օսմանյան կայսրությանը պատկանած հողերը: Քուրքիան խախտում էր իր կողմից հռչակված «չեզոքությունը»: Այսպես օրինակ՝ Քուրքական իշխանությունները թուլլատրում էին զերմանական ուղղմանավերին պայտ կերպով անցնել Սև ծով, որով վտանգ էր ստեղծվում ՍՍՌՄ-ի սևծովյան ափերի համար: Այնուհետև զերմանական ուղղմանավերը հնարավորություն

¹⁴ Տե՛ս՝ В. А. Секистов, Странная война в Западной Европе и в бассейне Средиземного моря (1939—1943), М., 1958, стр. 194.

ունեցան սևծովյան նեղուցները ազատ օգտագործել իրենց փախուստի համար: Դա ոչ միայն «չեզոքություն» խախտում էր, այլ նաև սևծովյան նեղուցների միջազգային-իրավական ուժերի կոպիտ խախտում:

Քուրքական բանակի մեծ մասը կենտրոնացված էր սովետա-բուրջական սահմանի վրա: Այդ պատճառով Սովետական Միությունը ստիպված էր գինված ուժեր պահել Անդրկովկասում, այն ժամանակ, երբ սովետական այդ գործառնաբեր կարող էին հաշտությունը օգտագործվել պատերազմի ձախտանքում: Քուրքիան փաստորեն մասնակցեց երկրորդ համաշխարհային պատերազմին՝ բնօրինակ Սովետական Միության ու հակաՖաշիստական կառիցիայի մյուս պետությունների: Դեռ ամենին, բուրջական կառավարողները Սովետական Միության վրա ուղղակի ռազմական հարձակում գործելու պլաններ էին մշակում: Սակայն այդ պլանները հօգս ցնդեցին Վոլգոգրադի պատերի տակ զերմանական բանակի աննախընթաց պարտությունից հետո: Քուրքական կառավարողների համար պարզվեց, որ Գերմանիան պատերազմն անվերապարձորեն տանուլ է տալիս: Վերհիշելով առաջին համաշխարհային պատերազմում Գերմանիայի օգտին Օսմանյան կայսրության մասնակցության դառն ձախտագիրը, երանք որոշեցին չհարձակվել ՍՍՌՄ-ի վրա:

Պարզ էր հանել, որ Քուրբիայի մասնակցությունը պատերազմին, նրան կարծանացներ Գերմանիայի բախտին¹⁵։ Այս հարցում անհրաժեշտ է նկատել ունենալ նաև հետևյալ հանգամանքը։ Արևմտյան երկրները՝ ԱՄՆ-ը և Անգլիան, երկուսը համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում ամեն կերպ ջանում էին Քուրբիային իրենց կողմը նկրտաշելու։ Այդ նպատակով ԱՄՆ-ը Քուրբիային արամազրոց օգնություն լենդ-լիդի գծով, շնայած այն բանին, որ դա լենդ-լիդի մասին օրենքի խախտում էր, բանի որ Քուրբիան չէր պատերազմում Գերմանիայի դեմ։ Այնուհանդերձ ԱՄՆ-ը և Անգլիան Քուրբիային արամազրոցին ղենը ու սուղմական հանգերթանք, ինչպես նաև ֆինանսական օգնություն։ Անգլիայի ու Քուրբիայի, իսկ

¹⁵ Ի ղեկ այժմ հայտնի է դարձել, որ Ֆաշիստական Գերմանիան այդ ժամանակ մտադիր է եղել Տարածվելու Քուրբիայի վրա։ Հարձակումը նախատեսված էր 1943 թվականի ամռանը, իսկ հարձակման պլանը («Անատոլիական սպեկուլյացիա») մշակված էր դեռևս 1940 թվականի աշնանը պերմանտան բանակի ցամաքային ուժերի ղեկավար չտարի սպեկտավով վարդաբան պլան՝ պատերազմի հանցագործ, ղենրազ Նոյեմբերի կողմից (Տե՛ս «Труж», 24 декабря 1960 г. № 13)։ Ֆաշիստական Գերմանիայում մշակվել էր նաև Քուրբիան հրաներին բարդելու պլան։ Ինչպես տեսնում ենք Քուրբիայի սկուպացումը խոստովեց պլանա-գերմանական հակառակ գերմանական բանակի պարտություն հետանքով։

հետ ԱՄՆ-ի, Անգլիայի ու Քուրբիայի պետական զործիչները Ադանայի (1943 թվականի հունվար) և Կահիրեի (1943 թվականի դեկտեմբեր) կոնֆերանսներում քննարկեցին Քուրբիայի արտաքին քաղաքականության հարցը։ Գրանցիչ հետո 1944 թվականի օգոստոսին Քուրբիան ինչեց իր դիվանագիտական ու անասական կապերը Գերմանիայի հետ, իսկ այնուհետև՝ 1945 թվականի փետրվարի 23-ին պատերազմ հայտարարեց նրան։ Պատերազմի հայտարարումից հետո Քուրբիան կառավարությունը բռնազրավեց գերմանական սեփականությունն ալեկի քան 100 մլն. արևմտա-գերմանական մարկ (այսուհետև մարկ-Մ. Հ.) արժողությունը՝ 1961 թվականի կուրսով։

Քուրբիան Ֆաշիստական Գերմանիային ձեռնարկած պատերազմ հայտարարեց այսպեսլուծ միջազգային մեկուսացումից խուսափելու և Միավորված ազգերի կազմակերպության Ստեֆանոսիանյի կոնֆերանսին մասնակցելու իրավունք ստանալու¹⁶, այսինքն ՄՄԿ-ի անդամ դառնալու նպատակով։

Սովետական Միության վրա չհարձակվելու և Գերմանիային պատերազմ հայտարարելու Քուրբիան կառավարողների քաղաքականությունը լիովին համապատասխանում էր ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության նպատակներին՝ ետպա-

¹⁶ „The Middle East 1959“, London, 1959, p. 300.

տերազմյան ժամանակաշրջանում Քուրբան օդ-
տագործն էլ որպես սաղմա-բաղաբակյան պրաց-
դարմ ՍՍՌՄ-ի դեմ:



Երկրորդ համաշխարհային պատերազմում
ղերմանական ֆաշիստական իմպերիալիզմի պար-
տությունից հետո ՍՍՌՄ-ը, ԱՄՆ-ը ու Անգլիան
1945 թվականի օգոստոսին Պոտսդամում ստո-
րադրեցին համաձայնագիր՝ Գերմանիայի առա-
ջա տնտեսական ու քաղաքական կազույթաձեռի
վերաբերյալ: Այնուհետև այդ համաձայնագրին
միացավ Ֆրանսիան: Պոտսդամյան համաձայնա-
գիրը նախատեսում է ամբողջ Գերմանիայի զի-
նաթափում ու սպառազմականացում, միլիտարիզ-
մի ու նացիզմի մեկընդմիջա լիկվիդացում ու
քաղաքական կյանքի ղեմնկրատացում: Համա-
ձայնագիրը միաժամանակ նախատեսում է մո-
նոպոլիտական միավորումների՝ կարտելների,
սինդիկատների, արեստների ու կոնցենտրի լի-
վիդացում, որոնք կրում են երկու համաշխար-
հային պատերազմների սանձազերծման գլխավոր
սպատասխանատվութունը:

Բայց շուտով ԱՄՆ-ը և արևմտյան մյուս եր-
կրները կոպիտ կերպով խախտեցին պոտսդամ-
յան համաձայնագիրը ու սկսեցին վարել զերմա-
նական սաղմաձուլ-մոնոպոլիտական միավո-

րումների պահպանման, վերականգնման ու հետա-
դա հզորացման՝ գերմանական ժողովրդի համար
աղգույին մեծ շարիքանք բաղաբակյանություն:

Ամերիկայի Միացյալ Նահանգները Ռուրի
մազնատների հզորության վերականգնման նպա-
տակով մշակեցին և իրագործեցին մի շարք
պլաններ, ինչպես՝ Մարշալի պլանը և Շումանի
պլանը, Հյուսիս-ատլանտյան ազդեսիվ խմբա-
վորման կազմակերպման ու բունդեսվերի վերա-
ծրնման և այլ պլաններ:

Ամերիկյան իմպերիալիզմը վերոհիշյալ պլան-
ների շրջանակներում ֆինանսական մեծ օգնու-
թյուն տրամադրեց արևմտագերմանական մոնո-
պոլիաններին:

1945—1956 թվականների ընթացքում ԱՄՆ-ը
Արևմտյան Գերմանիային տրամադրեց 3,8 մի-
լիարդ դոլլարի օւղղակի տնտեսական «օգնու-
թյուն»: Այս գումարի մեջ չի մտնում 700 մլն.
դոլլարի այն տնտեսական «օգնությունը», որ
ԱՄՆ-ը տրամադրել էր այդ նույն ժամանակա-
շրջանում Արևմտյան Բեռլինին: Արևմտյան երկր-
ների ու հատկապես ԱՄՆ-ի մոնոպոլիտական
կապիտալի օժանդակությամբ Արևմտյան Գերմա-
նիայի արդյունաբերական արտադրանքի ծավալը
ոչ միայն վերականգնվեց, այլև նախադատե-
րազմյան ամբողջ Գերմանիայի համեմատությամբ
տվիթի բան երկու անգամ աճեց:

Արևմտյան Գերմանիաի սնտեսական հզորութեան վերականգման պատճառները բացահայտելով ընկ. Խորաշուքը, պարտիայի XXII համադումարի քննարկմանը ներկայացված ՍՄԿՊ Կենտկոմի հաշվետվութեան մեջ, նշում էր հետևյալը՝

ժողովատերազմյան առիթներին ԱՄՆ-ի մոնոպոլիաները հսկայական կապիտալներ ներդրեցին Արևմտյան Գերմանիայի և Ճապոնիայի կոնոմիկայի մեջ: Այդ երկու երկրները մի շարք առարկներ փաստորեն ազատվեցին սեփական ռազմական ծախսերի բեռից, քանի որ ԱՄՆ-ը նրանց սպառազինութիւն էր մատակարարում ամերիկյան վարկատուների հաշիվին: Արևմտյան Գերմանիան և Ճապոնիան հսկայական կապիտալ ներդրումներ կատարեցին իրենց էկոնոմիկայի զլխավոր ճյուղերում՝ մշտական կապիտալը նորացնելու, մամանակակից հիմքի վրա արտադրութիւնը վերակազմելու նպատակով: Գրա հետևմանքով նրանք արդեն այժմ համաշխարհային շուկայում հանդես են գալիս որպէս Անգլիայի, Յրանիայի ու Նույնիսկ Ամերիկայի Միացյալ Նահանգների լուրջ մրցակիցները¹⁷:

Արդունարեքական արտադրանքի ծավալով Բոննի Ռեսպուբլիկան արդեն հասել է Անգլիային,

17 Ն. Յ. Խորաշուք, ՍՄԿՊ Կենտկոմի հաշվետվութեան պարտիայի XXII համադումարին, 1961, էջ 24:

իսկ արտահանման նստարեզում՝ նույնիսկ առաջանցել նրանից¹⁸:

Արևմտագերմանական մոնոպոլիաները լիարժեքներն են իրենց առևտրական գիրքերը ոչ միայն այն շուկաներում, որտեղից նրանք զուրկ են մղվել երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում ամերիկյան ու անգլիական կապիտալի կողմից՝ Արևմտյան Եվրոպա, Հյուսիսային ու հարավային Ամերիկա, այլև ներխուժում են նոր երկրներ, հատկապէս Մերձավոր ու Միջին արևելք, հարավ-արևելյան Ասիա ու Աֆրիկա: Արևմտյան Գերմանիայի արտաքին առևտրական էքսպանսիայի հաջողութեւնը բացատրվում է մի շարք գործոններով:

Առավել կարևոր գործոնը՝ արևմտագերմանական արտադրանքների էժան լինելն է անգլիական ու մասամբ, նույնիսկ ամերիկյան արտադրանքների համեմատ: Նրանք ունեն բարձր որակ ու մատակարարվում են համեմատաբար կարճ ժամկետներում: Այնուհետև, արևմտագերմանական կառավարութիւնն ու մոնոպոլիաները վարկային օվիլի հարմար պայմաններ են ստեղծում արտաքին առևտրի համար, քան ԱՄՆ կամ Անգլիան: Արտաքին առևտրի հաջողութեւնը նպաստում է նաև այն հանգամանքը, որ արևմտագերմանական արդյունաբերութիւնն առայժմ այնքան էլ ծան-

18 Ն. Յ. Խորաշուք, նույն անգամ, էջ 24:

բարեկեցիկ շէ ուղղմական պատվերներով, ինչպէս մյուս կապիտալիստական մեծ երկրները, ուստի հնարավորութիւն ունի ժամանակին կատարելու իր պայմանագրային պատվերները նալին:

Պատերազմի գերմանական մի շարք միջադրային հանցագործներ, ինչպիսիք են ֆոն Պապկներ ու հատկապէս Շախտը, հասնողուն արտաքին անտեսական գործունեութիւնն են բարձրում ե ծավալում: Այս ասպարեզում նրանցից ետ շինմունում Արեւմտյան Գերմանիայի պետական գործիչներ Ազենաուերը, էրհարդը ե սրիշները:

Համաշխարհային միասնական շուկայի սրահման, սոցիալիստական ու կապիտալիստական համաշխարհային շուկաների առկայութիւնն սրայմաններում անպիսական, ամերիկյան ու արեւմտադերմանական մոնոպոլիաների մրցակցութիւնը որավոր քնդունում է սուր բնույթի Այդ շէն թաքքրնում նույնիսկ հիշված երկրների կառավարողներն ու բուրժուական մամուլը:

Բացի իրենց ուղղմարդունարեւական հորութիւնն վերականգնումից ու նրա հետագա բնդարձակումից, արեւմտադերմանական մազնաները լայն մասշտաբի միջոցառումներ են գործադրում նաև պինված ուժերի՝ բունդեալերի վերականգնման ե այն նորագույն ուղղմական տեխնիկայով զինելու նպատակով: Ուժեղանում են սեակ-

ցիայի գիրքերը երկրի ներսում: Կտրելի է համարձակ կերպով պնդել, որ Արեւմտյան Գերմանիայում ներքաղաքական կյանքն բնթանում է դեպի ֆաշիզմ: Բոննի կառավարութիւնը հենվելով մոնոպոլիստական միավորումների ու արեւմտյան երկրների կառավարող շրջանների աջակցութիւնն վրա, վարում է Արեւմտյան Գերմանիան պատերազմի պլանցարմի վերածելու, Գերմանիայի պառակտումը խորացնելու, սահմանների վերանայման ու սեանշիզմի քաղաքականութիւն:

**ԱՐԵՎՄՏԱԴԵՐՄԱՆԱԿԱՆ ՄՈՆՈԳՐԱՖԻԿԱՆԵՐԻ
ԱԹԵՎՏՐԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԹՈՒՄԸ ԹՅՈՒՐՔԻՆ**

Ինչպես վերևում նշվեց, Ռուրի սագմամոյ մագնատները ներխուժում են Արևմտյան եվրոպայի, Հյուսիսային ու Հարավային Ամերիկայի, Հարավ-արևելյան Ասիայի, Աֆրիկայի ու մասնավորապես Մերձավոր ու Միջին արևելքի երկրները։ Մերձավոր ու Միջին արևելքում արևմտագերմանական մոնոպոլիստական կապիտալի ներխուժմանն աջակցելու նպատակով ԳՅՌ-ի ղեկավար գործիչները ու խոշոր մոնոպոլիստների ներկայացուցիչները հաճախակի ուղևորություններ են կատարում դեպի այդ երկրները։ 1955 թ. սեպտեմբերին Արևմտյան Գերմանիան Արամբուլում հրավիրեց Մերձավոր ու Միջին արևելքում հալատարմագրված իր ղեկավարների առաջին խորհրդակցությունը։ Խորհրդակցության ժամանակ դեռ պահանջները հանդես եկան իրենց աշխատանքը կոորդինացնելու վերաբերյալ միջոցառումների առաջարկներով և ճշակեցին հետագա համատեղ աշխատանքի պլանը։ Արևմտյան Գերմանիայում հիմնվեց «Մերձավոր ու Միջին արևելքի Ընկերու-

թյուն» («Nah-und Mittelost Verein») գ-ր Ռեյնգարդ Հյուրբերի գլխավորությամբ (Համբուրգ)։ Այս ընկերությունը, փաստորեն, Գերմանական-Արևելյան ընկերության ժառանգորդն է, որը հիմնվել էր Ֆաշիզմի իշխանության գլուխ անցնելուց հետո՝ 1934 թվականին։ Այն միավորում է աշխարհի այս մասում գործող արևմտագերմանական մոնոպոլիստներն ու բանկերը։

Վերստիշյալ ընկերությունը զբաղվում է Մերձավոր ու Միջին արևելքի երկրների անտեսության ու առևտրի ուսումնասիրությամբ ու նրանց հետ առևտրի համար երաշխավորություններ է տալիս արևմտագերմանական մոնոպոլիստներին։ Այս ընկերությունը 1956 թվականի սեպտեմբերի 29-ին մինչև հոկտեմբերի 14-ը Համբուրգում ցուցահանդես կազմակերպեց նվիրված Մերձավոր ու Միջին արևելքին։

«Մերձավոր ու Միջին արևելքը երկկ և այսօր» կոչվող այդ ցուցահանդեսին մասնակցում էին մերձավորարևելյան տասը պետություն, Քուրբան, Իրանը, Եգիպտոսը, Իրաքը և այլն։

Ցուցահանդեսը ֆինանսավորվեց ԳՅՌ-ի կենսամեկայի միխտարության, Համբուրգի քաղաքապետության ու 85 մասնավոր ֆիրմաների ու բան-

1 Ռ. Հյուրբերը մահացել է 1959 թվականին Մամբուրում։

կրի կողմից (Կրուպպ, Էյլոկներ, Մաննեման և ուրիշներ): Ցուցահանդեսում կույթն ունեցավ նաև ֆոն Պապենը, որը Հատկապես շեշտեց ԳՃՄ-ի ու Մերձավոր ու Միջին արևելքի երկրների տնտեսական հարաբերությունների աճող կարևորությունը²:

Բռննում լույս է տեսնում հատուկ շարափաթիլներ, որը լուսարանում է Արարական Արևելքի տնտեսական ինֆորմները՝ «Wirtschafts-Informationen aus der arabischen Welt» («Արարական աշխարհի տնտեսական տեղեկագիր»)՝:

Արևմտյան Գերմանիան ակտիվ առևտրական գործունեություն է ծավալում Մերձավոր ու Միջին արևելքի շուկաներում: Արևմտադերմանական մոնոպոլիաները Մերձավոր ու Միջին արևելքի երկրներն են արտահանում արդյունաբերական դանդաղան սարքավորում, առևտրական ու մարդատար նավեր, ավտոմոբիլներ, թեթև արդյունաբերության ապրանքներ և այնտեղից ներմուծում նավթ, քրոմի հանքանյութ, սպիտակ, երկաթ, հանցահատիկային կուլտուրաներ, բամբակ, բուրդ և այլն: Արևմտյան Գերմանիայի արտահանումը դեպի Մերձավոր ու Միջին արևելք 1956 թվականին կազմեց նրա ընդհանուր արտահանության

² „Moniteur officiel du commerce et de l'industrie“, 1956, 22 novembre, p. 3751.

³ „Middle Eastern Affairs“, 1956, January, p. 12.

5,4 տոկոսը, իսկ ներմուծումը՝ նրա ընդհանուր ներմուծման 5,4 տոկոսը³:

Աղյուսակ 1

Արևմտյան Գերմանիայի ներմուծումը Մերձավոր ու Միջին արևելքի երկրներից (ՏՂՆ. գույքով)⁴

Երկրները	1950	1951	1952	1953	1954	1955	1956
Եգիպտոս	23,5	24,5	30,4	25,3	33,6	32,0	25,8
Իրաք	18,2	32,9	40,3	36,2	43,1	57,1	61,9
Սիրիա	1,1	1,3	3,6	0,8	21,0	9,3	12,2
Լիբանան		1,1	0,6	9,8	0,8	1,9	2,9
Իսրայել	0,02	0,01	0,1	1,8	0,8	2,0	5,7

Աղյուսակ 2

Արևմտյան Գերմանիայի արտահանումը Մերձավոր ու Միջին արևելքի երկրները (ՏՂՆ. գույքով)⁵

Երկրները	1950	1951	1952	1953	1954	1955	1956
Եգիպտոս	19,1	29,7	38,4	54,5	46,9	54,5	61,6
Իրաք	0,3	2,3	4,7	9,0	15,9	20,5	26,4
Սիրիա	7,1	7,7	9,4	11,5	20,4	20,8	19,4
Լիբանան		3,9	11,4	14,9	13,7	17,4	20,9
Իսրայել	0,5	4,1	5,4	13,8	53,3	62,8	65,3

⁴ „Middle Eastern Affairs“, 1957, August-September, p. 315.

⁵ Ibid, 1956, January, p. 18, 1957, August-September, p. 315.

⁶ Ibid, 1956, January, p. 18, 1957, August-September, p. 315.

Արևմտյան Գերմանիայի արտաքին առևտուրը Մերձավոր ու Միջին արևելքի երկրների հետ, արդեն 1953 թվականին, զերազանցեց նախապատերազմյան մակարդակը: Ինչպես հետևում է 1, 2 աղյուսակներից, Արևմտյան Գերմանիայի արտաքին առևտուրն աշխույժ բնույթ ունի Մերձավոր ու Միջին արևելքի հենց այն երկրների հետ (Եգիպտոս, Սիրիա, Լիբանան, Բարալեյ, Իրաք) ուր երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ զերիշխում էր անգլիական ու ֆրանսիական կապիտալը:

Անդրազանալով Արևմտյան Գերմանիայի առևտրական ներխուժմանը Մերձավոր ու Միջին արևելք ու այստեղ ծավալվող սուր մրցակցութանը ամերիկյան, անգլիական և արևմտագերմանական մոնոպոլիաների միջև «Յունայտեղ Մասյուս նյութս ընդ ուտուզ փոփոխում» հանդեսը գրում էր՝ «Պատերազմում կրած պարտությունից ուժ տարի հետո գերմանացիները Միջին արևելքում անցան Մեծ Բրիտանիայից ու մրցակցում են Միացյալ Նահանգների հետ: Գերմանական առևտրականները պայքարում են ամերիկացիների հետ այս շրջանում առաջին տեղը զբաղելու համար: Գերմանական ֆիրմաները խլում են պատվերները ամերիկյան և անգլիական մրցակիցների ձեռքից»¹:

¹ „United States News and World Report“, 1953, 30 October, p. 29.

Արևմտագերմանական մոնոպոլիաների արտաքին առևտրական էքսպանսիայի ընդարձակման նախորդ գլխում արդեն հիշատակված գործունեից բացի Արևմտյան Գերմանիայի և Մերձավոր ու Միջին արևելքի երկրների միջև առևտրական հարաբերությունների ընդարձակման պատճառներից մեկն էլ այն է, որ ԱՄՆ-ի, Անգլիայի ու Ֆրանսիայի հեղինակությունն աշխարհի այս շրջանում այժմ ցածր է, քան երբևէ որդիոխ հանգամանքից և օգտվում են արևմտագերմանական մոնոպոլիաները: «Մուտլզ տելեգրամ ընդ Սանս թերթը այս կապակցությամբ գրում էր. «Միջին արևելքում գերմանական ընկերությունները՝ զերազանց զիրքի հասան այն կապակցությամբ, որ Սուեզի ձգնամամից հետո արաբները շեն ուղում գործ ունենալ ոչ անգլիացիների ու ֆրանսիացիների և ոչ էլ ամերիկացիների հետ»²:

Այժմ արդեն զազարել է զազտնիք լինելուց այն, որ Արևմտյան Գերմանիան իրոք իր առջև նպատակ է դրել արևմտյան երկրներից դուրս մղել Մերձավոր արևելքից ու զավթել նրանց զիրքերը: Այդ մասին վիպում է նաև Արևմտյան Գերմանիայի վիցե-կանցլեր և անտեսություն մինիստր Լրհարդի 1958 թվականի զեկտեմբերին Կաշիրե ուղերթով արևմտագերմանական անտեսական

² „World Telegram and Sun“, 1957, 4 may.

սլատվիրակության անդամներին արած հետևյալ հայտարարությունը: «Գերմանիա-ի Ֆեդերալ պետությունիկան պետք է զրավի այն տեղը, որը մինչև հիմա զրավում էին արևմտյան երկրները Միջին արևելքում ոչ միայն անտեսական, այլ նաև քաղաքական ասպարեզում»⁹:

Արևմտագերմանական մոնոպոլիաները ուժեղացնելով իրենց ներխուժումը Մերձավոր ու Միջին արևելք, իրենց առջև դնում են մի նպատակ ևս, աճեն կերպ խանդարել Սովետական Միության ու սոցիալիստական համաշխարհային սիստեմի մյուս պետությունների անտեսական համադրժակցությունը մերձավորարևելյան երկրների հետ¹⁰: «Դի Աևյա» թերթը կոչ է անում արևմտագերմանական մինիստրներին հաճախակի այցելել Մերձավոր արևելքի երկրները, որպեսզի խանդարեն սոցիալիստական երկրների աղղեցությունը ծավալմանը աշխարհի այս մասում և որպեսզի թույլ զարգացած երկրներում անտեսական մրցակցություն ասպարեզում հաղթեն կապիտալիստական և առաջին հերթին արևմտագերմանական մոնոպոլիաները:

Սակայն այդ թերթը միաժամանակ ստիպված խոստովանում է, որ եթև գերմանական մոնոպոլիաները ի վիճակի են պահպանելու իրենց դիր-

բերը այստեղ, այդ մրցակցել ՍՍՏՄ-ի երկարատև վարկերի ու ցածր տեղուների հետ, ի վիճակի չեն¹¹:

Արևմտագերմանական մոնոպոլիաները, բացի անտարական էքսպանսիայից դեպի Մերձավոր ու Միջին արևելքի երկրները, այնտեղ կատարում են նաև ուղղակի կապիտալ ներդրումներ, ստանում են արդյունաբերական ձեռնարկությունների շինարարության պատվերներ, ստեղծում են խառը բաժնետիրական բնկերություններ տեղական կապիտալի հետ միասին, բացում են բանկային բաժանմունքներ, տրամադրում են տեխնիկական մասնագետներ ու վարկեր, ստանում են հանքային հարստությունների, նույնիսկ նավթի հետախուզման կոնցեսիաներ և այլն: Ցրիճակ՝ Միացյալ Արարական Ռեսպուբլիկայի Եզիպտական շրջանում արևմտագերմանական «Դեմազ» ֆիրման կառուցեց մետալուրգիական կոմբինատ Հեյուանում, իսկ մյուս ֆիրմաները՝ էլեկտրակայան, այլոմինի, սվիցաջիտ, տեքստիլ, քիմիական պարարտանյութերի ու սվտուհավաքման գործարաններ:

Արևմտագերմանական ֆիրմաները ստացել են մետալուրգիական, շարարի, ցեմենտի ու տեքստիլ գործարանների շինարարության ու սարքավորում տրամադրելու պատվերներ նաև Իրանում և այլն:

⁹ „Blitz“, 1959, 28 march.

¹⁰ „New Republic“, 1959, 12 January, p. 6.

¹¹ „Die Welt“, 1957, 4 Dezember.

Անդրադասնալով Արևմտյան Գերմանիայի ներխուժմանը Մերձավոր ու Միջին արևելք ՕՍԱարքյուղիկեր ցայտունը թերթը 1957 թվականի ասրիլի 15-ին գրում էր հետևյալը. «Լեվանտի երկրների մի շարք շրջանակներում (բաղարահան—Ռ. Կ.) լուրեր են տարածվում այն մասին, որ մյուս երկրների (Անգլիայի և Ֆրանսիայի Մ. Հ.) ձախողման կապակցությամբ կնքված է ամերիկա-գերմանական դաշտնի համաձայնագիր, որպեսզի ԳՖՌ-ն խաղա Արևմուտքի միջնորդի դերը Միջին արևելքի էկոնոմիկան—սազում աշխարհի» հետ կապելու համար»¹²:

Տեսնելով, որ Անգլիայի, Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի գաղութատիրական սլանները հանդիպում են Մերձավոր ու Միջին արևելքի ժողովուրդների լուրջ դեմադրությամբ, Արևմտյան Գերմանիան հանդես է գալիս հակազգալուսնությունների դեմը և աչն օգտագործում աշխարհի այս մասում իր ներխուժումն ուժեղացնելու և վերոհիշյալ պետությունների տեղը դրավելու համար:

* * *

Արևմտագերմանական մոնոպոլիաներն ակտիվ առևտրական գործունեություն են ծավալում մասնավորապես թուրքական շուկայում: Ինչպես

անցյալում, այնպես էլ այժմ, արևմտագերմանական իմպերիալիզմը թուրքիայում վարում է գաղութային բաղարահանություն, որը ոչ բովանդակությամբ և ոչ էլ իր մեթոդներով չի տարբերվում նախկին բաղարահանությունից: Ինչպես միշտ, աչնպես էլ այժմ, թուրքիայում արևմտագերմանական իմպերիալիզմի վարած գաղութային բաղարահանությունը դիտարկվում էր տեսնական էրսպանսիան է. իսկ նպատակը՝ հաստատելով իր գերիշխանությունը երկրի էկոնոմիկայի վրա, այն վերածել իր հումքային բաղարահանական հանգանակով նրա տերիտորիայ ամբողջականությունը, գրկել նրան ներքին և արտաքին ինքնուրույն բաղարահանությունից: Բացի այն գործունեություն, որոնք արակցում են արևմտագերմանական մոնոպոլիաների ակտիվ առևտրական էրսպանսիային կապիտալիստական համաշխարհային շուկայում, նրանց ակտիվ առևտրական ներխուժմանը, ալյալ գնկցում նաև զգալի կերպով օգնում են իրենց հին կապերը թուրքական բուրժուազիայի աչն խավի հետ, որն անցյալում միշտ հակված է եղել գնկել Գերմանիան:

Արևմտագերմանական մոնոպոլիաների ներխուժմանը թուրքիա մեծ շահով արակցում են նաև ԳՖՌ-ի սկտական գործիչները ու գործարար շրթրանների աչրն ընկնող ներկայացուցիչները, որանք սոսկ-սոսկ այցելում են թուրքիա: Եթն մի

¹² Տե՛ս „Recherches internationales à la lumière du marxisme“, 1958, juillet-août, p. 188.

Յուզիկ հայացք պցենը տնցած ժամանակաշրջանի վրա, ապա կտեսնենք, որ հուպատերազմյան ժամանակաշրջանում Քուրբիա են այցելել ԳՅՌ-ի համարյա թե բոլոր բարձրատիճան պետական գործիչները: Պաշտոնական աջնություններ Քուրբիայում եղել են ԳՅՌ-ի կանցլեր Աղենատերը (1953, 1954 և 1957 թթ.), վիցե-կանցլեր ու տնտեսության մինիստր Հրճարզը (1951, 1959 թթ.), սաղմական մինիստրներ Բլանկը (1955 թ.) ու Շարատար (1957 թ.), ԳՅՌ-ի պրեզիդենտ Հեյսը՝ արտաքին գործերի մինիստր Ֆոն Բրենտանոյի ուղեկցությամբ (1957 թ.), հաղորդակցության նախարար՝ Ների մինիստր Զենբոմը (1957 թ.), դուռնատնտեսության մինիստր Լյուրբկեն (1957 թ.) և ուրիշներ:

Արևմտյան Գերմանիայի կանցլեր Աղենատերը, մոնոպոլիտական կապիտալի էրազմանիային աջակցելու հարցում ուղղակի հետևում է Ալիճելիմ 2-րդի օրինակին:

Քուրբիա են այցելել նաև արևմտադերմանական մոնոպոլիտական կապիտալի այնպիսի ներկայացուցիչներ, ինչպիսիք են գերմանական նախկին գեապանության առևտրական խորհրդական Շենկեն (1951 թ.), գերմանական բանկի նախկին գլխավոր Ալեզեմանը (1951 թ.), Արևմտյան Գերմանիայի առևտրական պալատի գլխավոր Մյուլ-

լերը (1951 թ.), Շախտը (1954 թ.), Ալֆրեդ կրուպ-պը (1957 թ.) և ուրիշներ:

1951 թվականի սեպտեմբերի 27-ին Քուրբիա ժամանեց նաև Ֆոն Պապենը: Անդրադառնալով Ֆոն Պապենի Քուրբիա կատարած ուղևորության արդյունքներին, որը հայտարարել է, թե Քուրբիան հանդիսանում է իր երկրորդ հայրենիքը, «Սպեկտակլոր» հանդեսը գրում է.

«Ժամանակակից Քուրբիայի քաղաքականության ամենազարմացուցիչ առանձնահատկություններից մեկը Քուրբիայի ու Գերմանիայի միջև եղած վաղեմի կապերի վերականգնումն է: Անցյալ ամսին Ֆոն Պապենին ցույց տրված սրտային բնզունելությունը Ստամբուլում անսարակույս էր: Ի դեպ ասած, Ֆոն Պապենի ապարտի (ազգայնական ժամանակի) մի քանի աշխատակիցներ, բոտլաբերի, արդեն հիմնավորվել են գերմանական դեսպանատանը: Զանազան առևտրական, կուլտուրական ու տեխնիկական միտանների կազմում Քուրբիա վերադարձած գերմանացիները, որոշ բարձրակոչ, բայց լիակատար հիմքով վտառություն են հայտնում իրենց ապագա պոտուցաբուրության մասին»¹³:

Տնտեսական կապեր հաստատելու նպատակով Քուրբիա գործուղված ներկայացուցիչների

¹³ „Spectator“, 1951, 2 november, p. 562.

թվով Արևմտյան Գերմանիան զբաղում է երկրորդ տեղը՝ ԱՄՆ-ից հետո:

Արևմտագերմանական դեղին մամուլը լայնորեն քննարկում է Թուրքական շրջալսի զավթման հարցը: Այստեղ հրատարակվում են դրոբը, որոնք Թուրքիայի գազութային ուղղակի կոչեր են անում: Այդ դրոբերում զովերգվում են նաև գերմանական ֆաշիստների ու Թուրքական կառավարողների «լապեմի արտադին բարեկամությունը» ու Թուրքիան գեղի Արևմտյան Գերմանիա կողմնորոշելու անտեսական ու բազարական «գառափա-տությունը»: Արևմտագերմանական մոնոպոլիստական շրջանների հափշտակողական պլանները Թուրքիայի նկատմամբ ստավիչ հասակ ու պարզ կերպով հռչակվել են Շախտի կողմից, որը ի գաղարում գովերգվուց այն միտքը, թե «Թուրքիան և Գերմանիան անտեսապես լրացնում են միմյանց»¹²:

Գերմանիայի հետ առևտրական ու զինվանագիտական կապերի խզման ու նրան պատերազմ հայտարարելու հետևանքով Գերմանիայի դիրքերը Թուրքիայում համարյա թե լիկվիդացվեցին: Պատերազմում կրած պարտությունն ու անտեսական քայքայվածությունն պատճառով Արևմտյան Գերմանիայի բաժինը Թուրքիայի ներմուծման մեջ, 1945—1946 թվականներին կազմում էր 1,1 և

0,03 տոկոս¹³: Այդ նույն տարիների ընթացքում Արևմտյան Գերմանիայի բաժինը Թուրքիայի արտահանման մեջ իջել էր մինչև դերոյի Թուրքիայի ներքին ու արտաքին առևտրի հաշվեկշռում Արևմտյան Գերմանիային փոխարինեց Անգլիան: Բայց «Տրամենի գրկալորինախ ու «Մարշալի պլանի» հռչակումից հետո ԱՄՆ-ին հաջողվեց Անգլիային հետին պլան մղել ու զբաղել առաջին տեղը Թուրքիայի ներքին ու արտաքին առևտրական շրջանառության մեջ ընդհուպ մինչև 1949 թվականը:

Արևմտագերմանական մոնոպոլիանների ուղմտարդունարերական հզորության վերականգնմանը ղուղրեթաց աշխուժանում է նրանց առևտուրը Թուրքիայի հետ: Եթե 1947 թվականին Արևմտյան Գերմանիայի բաժինը Թուրքիայի ներմուծման մեջ կազմում էր 0,02 տոկոս, իսկ 1948 թվականին՝ 0,8 տոկոս, 1949 թվականին այն կազմեց 4,6 տոկոս, իսկ Թուրքիայի արտահանման մեջ համապատասխանաբար՝ 0,1 3,8 և 16,1 տոկոս¹⁴:

1948 թվականի ապրիլի 19-ին կնքվեց առևտրական առաջին պայմանագիրը Թուրքիայի և Արևմտյան Գերմանիայի օկուպացիոն ֆրանսիական գոտու միջև, որից հետո այդ նույն թվականի գիկտեմբերի 16-ին կնքվեց առևտրական պայմա-

¹³ Yves Fanchon et Maurice Leruth, ibid, p. 21.

¹⁴ Yves Fanchon et Maurice Leruth, ibid, p. 46.

¹⁴ „Известия“, 23 марта 1954.

նագիր Քուրբխայի ու Քիզլոնիայի միջև Շուտով՝ 1949 թվականի հունվարի 15-ին կնքվեց նոր առևտրական պայմանագիր Քուրբխայի ու Տրիզոնիայի միջև: Արդեն 1948 թվականին Արևմտյան Գերմանիան թուրքական շուկայում սուաջ անցավ Անգլիայից ու զբաղվեց երկրորդ տեղը ԱՄՆ-ից հետո:

1949 և 1950 թվականների ընթացքում Արևմտյան Գերմանիայի արտահանումը Քուրբխայի շինարարության կատարված ներմուծմանը Այդ տեղի ունեցած աշն պատճառով, որ այդ տարիների ընթացքում Արևմտյան Գերմանիան Քուրբխայից ներմուծեց մեծ քանակությամբ գյուղատնտեսական ապրանքներ և այն էլ ավելի բարձր գներով, քան նրանց համաշխարհային գները: Արևմտյան Գերմանիան վերոհիշյալ երկու տարիների ընթացքում Քուրբխային պարտք մնաց մոտ 100 մլն. թ. լիրա: Արևմտյան Գերմանիան իր այդ պարտքի գլխի մասը փակեց Մարշալի պլանի համաձայն նրան արամադրված ամերիկյան վարկ հաշիվին¹⁷:

Հետագա տարիների ընթացքում անևտորը երկու երկրների միջև սկսեց աճել արագ տեմպերով:

Արևմտյան Գերմանիայի արտաքին առևտրա-

¹⁷ Տե՛ս Օ. Յ. Կուգոբո, *Политика США и Англии на Ближнем и Среднем Востоке*, М., 1960, стр. 165.
40

Ա գ ղ ո ս ս գ 4 5

Քուրբխայի Երմուծումը
(բառ տասններե ճիւղերի, ստիսանքով)¹⁸

Երկրներ	1950	1951	1952	1953	1954	1955	1956	1957	1958	1959
ԱՄՆ	24,5	11,1	8,4	11,3	15,0	22,4	21,1	30,7	27,8	21,7
Անգլիա	10,4	17,1	17,8	13,7	8,7	7,8	8,2	7,7	7,1	11,6
Արևմտյան Գերմանիան	17,6	23,7	25,0	20,8	17,3	17,6	23,6	23,6	15,5	18,9

Ա գ ղ ո ս ս գ 4 6

Քուրբխայի արտահանումը
(բառ տասններե ճիւղերի, ստիսանքով)

Երկրներ	1950	1951	1952	1953	1954	1955	1956	1957	1958	1959
ԱՄՆ	16,9	21,4	16,0	20,2	17,4	15,5	19,7	26,0	20,3	17,8
Անգլիա	14,0	8,3	6,6	6,8	6,9	7,4	7,6	9,2	6,2	9,6
Արևմտյան Գերմանիան	22,2	26,6	23,7	15,4	17,8	15,7	16,6	12,9	18,0	22,4

¹⁸ Աղբյուրները կազմված են մեր կողմից՝ բառ շեռայի արքայազնի, *Э. Луб-швейтц*, Турция, М., 1955, стр. 398; Экономическое положение капиталистических стран в 1955 году, М., 1956, стр. 537; Middle Eastern Affairs, 1957, august-september, p. 312; Istanbul, 1957, 18 decembre; Three monthly economic review Turkey, Annual-supplement, London, may, 1960, p. 9.

կան ներխուժմանը Քուրբիա, որոշ շափով նպաստեց նաև այն հանգամանքը, որ 1950 թվականի մայիսին Քուրբիայում իշխանությունն անցավ Պեմոկրատական պարտիայի ձեռքը, որի պարագլուխներից մեկը՝ Ջեյլա Բայարը, հանդիսանում էր ամերիկյան և գերմանական իմպերիալիզմի վաղձի կամակատարը: Պեմոկրատական պարտիայի հաղթանակը բնորոշություններում մեծ գոհունակությամբ ընդունվեց արևմտագերմանական դորձարար շրջանների կողմից: «Աիրշաֆտդրինենստ» հանդեսը այդ կապակցությամբ գրում էր, որ Պեմոկրատական պարտիայի իշխանության գլուխ անցնելը, նոր հնարավորություններ է բացում արևմտագերմանական մոնոպոլիաների Քուրբիա ներխուժելու համար: Փերթը շեշտում էր հատկապես այն հանգամանքը, որ Քուրբիան ու Արևմտյան Գերմանիան անտեսապես լրացնում են միմյանց¹⁹:

3 և 4 աղյուսակները ակնառու կերպով ցույց են ապրիս, թե ինչպես սրվում են անզո-արևմտագերմանական ու ամերիկա-արևմտագերմանական հակասությունները: Թուրքական շուկայում²⁰:

Սակայն 3, 4 աղյուսակները միաժամանակ վկայում են այն մասին, որ շնայած այդ ուժեղ

¹⁹ Yves Fanchon et Maurice Lerath, *ibid*, p. 81.

²⁰ «Սոփեսական Միության կոմունիստական պարտիայի Երազիրը», 1961, էջ 37.

մրցակցությունը, Արևմտյան Գերմանիայի անտարական ներխուժումը Քուրբիա ետպատերազմյան առաջին տարիների համեմատությամբ բավականաչափ ուժեղացել է: Թեև, Արևմտյան Գերմանիայի բաժինը Քուրբիայի ներքին ու արտաքին առևտրի մեջ ստիտուալին հարաբերությամբ գիշում է նրանց միջև գոյություն ունեցող նախապատերազմյան առևտրի մակարդակին: Աղյուսակներում բերված թվերից երևում է, որ համեմատարար կարճ ժամանակամիջոցում արևմտագերմանական մոնոպոլիաներին հաջողվել է Թուրքական շուկայում հեռին պլան մզել անզլիական մոնոպոլիաներին: Այստեղ՝ առաջնության համար մրցակցությունը այժմ ծավալվում է միայն ու միայն ամերիկյան ու արևմտագերմանական մոնոպոլիաների միջև, որը առանձին տարիներում լուծվում է Արևմտյան Գերմանիայի օգտին: Օրինակ՝ 1951—1954 և 1959 թվականների ընթացքում Արևմտյան Գերմանիան առաջին տեղն է զբաղել Քուրբիայի ստևորական շրջանառության մեջ:

1951 թվականին Արևմտյան Գերմանիայի արտահանումը Քուրբիա կազմել է 105,002 հազար զոլլար, իսկ ներմուծումը՝ 83,639 հազար զոլլար՝ ԱՄՆ-ինը համապատասխանարար՝ 60,074 հազար զոլլար և 67,537 հազար զոլլար²¹: Քուրբիական

²¹ Yves Fanchon et Maurice Lerath, *ibid*, p. 47.

շուկայում, վերստին շույլ երկրներին մրցակցություն տեսակետից, շատ հատկանշական է 1952 թվականը, երբ Արևմտյան Գերմանիայի ատևաուրը Քուրբիայի հետ համարյա հավասարվեց ԱՄՆ-ի ու Անգլիայի ատևաուրի շահին: Քուրբիական պաշտոնական վիճակագրության տվյալների համաձայն, այդ տարում Արևմտյան Գերմանիայի ներմուծումը Քուրբիայից կազմեց 240,7 մլն. թ. լիրա, իսկ ԱՄՆ-ի ու Անգլիայի ներմուծումը՝ 228,9 մլն. թ. լիրա: Այդ նույն թվականին Արևմտյան Գերմանիայի արտահանումը Քուրբիա կազմեց 338,6 մլն. թ. լիրա, կամ մոտ 70 մլն. լիրա: Եվ պակաս, քան ԱՄՆ-ի ու Անգլիայի արտահանումը միասին վերցրած²²:

Արևմտյան Գերմանիան Քուրբիա է արտահանում սարքավորում արդյունաբերության զարգացման ճյուղերի համար, էլեկտրատեխնիկական, օդատիկայի ու ճշգրիտ մեխանիկայի ապրանքներ, գյուղատնտեսական մեքենաներ, տրանսպորտի միջոցներ՝ բեռնափար ու մարդատար ավտոմեքենաներ, շոգենափեր, տպագրական մեքենաներ, երկաթի ու պղնձի ձուլվածք, պողպատյա խողովակներ, բրդյա ու բամբակյա մանվածք ու կոտրեղեն, թուղթ, քիմիական ներկեր, ռետինատեխնիկական ապրանքներ, ղեղորայք, ցիմենտ, քիմիական պարարտանյութեր և այլն: Նա գրավում

է առաջին տեղը Քուրբիայի ներմուծման մեջ այնպիսի ապրանքներով, ինչպիսին են երկաթի ու սոդայատի ձուլվածքը, էլեկտրատեխնիկական սարքավորումը, տրանսպորտի միջոցները, տերստիլ ու բրդյա դորմվածքեղենը, պատրաստի հագուստը, մանվածքը, քիմիական ապրանքները և այլն:

Քուրբիան իր հերթին Արևմտյան Գերմանիա է արտահանում բրոմի հանքանյութ, մարգանեց, երկաթի ու պղնձի հանքաքար, կենդանի անասուն, ցորեն, գարի, վարսակ, ծխախոտ, բամբակ, բուրդ, ճիթապտուղ, շոք մրգեղեն, միրգ, կաշի, կաղին, գինի, օղի, ձկան պահածոներ, անատառափայտ, դարաղանյութ և այլն:

Քուրբիան Արևմտյան Գերմանիային բրոմի հանքաքար մատակարարող հիմնական երկիրն է: «Քուրբիան հանդիսանում է Արևմտյան Գերմանիայի զլիավոր գնորդը ու մատակարարողը Մերձավոր Արևելքում» գրում է բելգիական «Գրասպա ուսմ մազագին» թերթը²³:

Արևմտյան Գերմանիան Քուրբիայից մեծ քանակությամբ գյուղատնտեսական հումք, հանքային հանածոներ է ներմուծում իր օտարաեզրկական պաշարները լրացնելու և սպառվածանյութի արագացնելու նպատակով: Արևմտյան Գերմանիան ձգտում է Քուրբիան վերածել իր սաղմա-

²² „Yeni Istanbul“, 1954, 14 şubat.

²³ „Drapeau Rouge Magazine“, 1958, 26 avril.

Քուրք-արևմտագերմանական

	1951	1952	1953	1954
Ներմուծում . . .	265,7	388,6	311,1	232,1
Արտահանում . .	234,3	240,7	170,1	167,4

կան մեքենայի հումքային բաղաչի, սպրանքների վաճառահանման շուկայի: Այդ տեսակետից Արևմտյան Գերմանիայի առևտրական քաղաքականությունը Քուրքիայում ոչնչով չի տարբերվում երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին ֆաշիստական Գերմանիայի վարած քաղաքականությունից:

Այսպիսով (տե՛ս աղյուսակ N 5) ստացվում է, որ վերոհիշյալ տարիների ընթացքում Քուրք-արևմտագերմանական առևտուրը ունեցել է մշտական պակասորդ (դեֆիցիտ), որն ընդհանուր առմամբ կազմում է 668,1 մլն. թ. լիրա կամ Քուրքիայի արտաքին առևտրի պակասորդի ալիքի քան 25 տոկոսը: Քուրք-արևմտագերմանական առևտրական փոխադարձությունները քննելիս երևում է, որ նրանք կրում են փոփոխական բնույթ՝ թե՛ ընդհանուր ծավալի և թե՛ սպրանքացուցակի տեսակետից:

Քուրք-արևմտագերմանական առևտրի մեջ Արևմտյան Գերմանիայի ներմուծման նկատմամբ

Աղյուսակ 3

առևտուրը մլն. թ. լիրայով²⁴

1955	1956	1957	1958	1959
244,7	269,0	151,2	136,9	234,6
137,6	141,1	125,0	126,7	222,9

արտահանման զգալի գերակշռության ու Քուրքիայի արտաքին առևտրական պակասորդի մշտական աճի կապակցությամբ, Արևմտյան Գերմանիան հանդիպում է լուրջ զգալարությունների:

Օրինակ, 1953 թվականին Արևմտյան Գերմանիայի արտահանումը Քուրքիա 1952 թվականի համեմատությամբ պակասեց 77,5 մլն. թ. լիրայով, իսկ ներմուծումը՝ 70,6 մլն. թ. լիրայով: Այդ նույն թվականին Քուրքիական կառավարությունը ստակյքեց արևմտագերմանական շահույթը մոտ 120 մլն. մարկի շափով ու նույնիսկ սահմանափակեց Արևմտյան Գերմանիայից կատարվող ներմուծումը: Վերջինս իր հերթին կրճատեց իր արտահանումը Քուրքիա 1953 թ. Քուրքիայի ու Արևմտյան Գերմանիայի միջև տեղի ունեցող բանակցություններ՝ Քուրքիական դադարանկասկան

²⁴ N 5 աղյուսակը կազմված է մեր կողմից՝ ըստ հետվյուղ աղբյուրների Ե. Ի. Իոս սոբսկույ, «Экспансия западногерманских монополий на Ближнем и Среднем Востоке», «Советско-востоковедение», 1958, № 4, стр. 53:

այսրանքների Արևմտյան Գերմանիա արտահանումն ավելացնելու վերաբերյալ: Բանակցություններն ավարտվեցին առևտրական համաձայնագրի կնքումով (1953 թվականի օգոստոս), որով Քուրբիան հնարավորություն էր ստանում 1953—1954 թթ. բնթացքում Արևմտյան Գերմանիա արտահանել 700 հազար տոննա հացահատիկ, 12 հազար տոննա ծխախոտ, 40 հազար տոննա բամբակ ու 32 հազար տոննա մրգեղեն²⁵:

Այդ նույն թվականի հոկտեմբերին Արևմտյան Գերմանիա մեկնեց մի թուրքական առևտրական պատվիրակություն, որը բանակցություններ վարեց հացահատիկային կուլտուրաների արտահանման հարցի շուրջը: Այդ բանակցությունների բնթացքում Արևմտյան Գերմանիան վերջնականապես համաձայնվեց Քուրբիայից ներմուծել տարեկան ոչ պակաս քան 700 հազար տոննա հացահատիկ²⁶:

„Yearbook of international trade statistics“, 1958, vol. I: United Nations, New-york, 1958, p. 508; „The Middle East 1959“, London, 1959, p. 312; „Bulletin des Press-und Informationsamtes der Bundesregierung“, Bonn, den 17 März, 1960, s. 512; „The Middle East 1961“, London, 1961, p. 343.

²⁵ „Journal d'Orient“, 1953, 7 août.

²⁶ „Yeni Istanbul“, 1954, 10 ekim.

1954 թվականին Արևմտյան Գերմանիայի արտահանումը Քուրբիա 1953 թվականի համեմատությամբ նորից կրճատվեց: Եթե 1953 թվականին Արևմտյան Գերմանիայի արտահանումը Քուրբիա կազմում էր 311,1 մլն. թ. լիրա, ապա 1954 թվականին այն կազմեց 232,2 մլն. թ. լիրա: Բայց 1954 թվականի դեկտեմբերի 21-ին երկու երկրների միջև կնքվեց առևտրական նոր պայմանագիր, որից հետո հարորդ տարում Արևմտյան Գերմանիայի արտահանումը Քուրբիա 1954 թվականի համեմատությամբ աճեց 12,6 մլն. թ. լիրայի չափով: Քուրբիայի ներմուծումը Արևմտյան Գերմանիայից 1957 թվականին կրճատվեց 118 մլն. թ. լիրայով՝ 1956 թվականի համեմատությամբ:

Այժմ հարց է ծագում, ի՞նչ հողի վրա ու ի՞նչ միջոցներով է ծավալվում թուրք-արևմտագերմանական առևտուրը, հատկապես նկատի ունենալով այն հանդամանքը, որ զեռես 1953 թվականի մայիսին, Գորգոմուզում ունեցած իր կուլթում էր՝ արգել հանգստացրեց Արևմտյան Գերմանիայի մրցակիցներին, որ ԳՅՄ-ն չի ձգտի ավելացնել իր արտահանումը վարկավորման միջոցով²⁷: Բայց էր՝ արդի հայտարարությունն արված էր զուտ սակու համար իր առևտրական

²⁷ „БИКИ“, 1953, № 60, стр. 1.

գիրքերը Քուրբիայում չկորցնելու ու ավելի ուժեղացնելու նպատակով Արևմտյան Գերմանիան Քուրբիային տրամադրում է վարկեր կամ, ուղղակի ասած, իր սեփական միջոցներով վարկավորում է անասուրը Քուրբիայի՝ Հետո Արևմտյան Գերմանիան լայն կերպով օգտագործում է իմպերիալիստական երկրների այն պրակտիկան, որ յնչպես Վ. Բ. Անինն է մասնանշել սկապիտալի արտահանումն արտասահման՝ դառնում է միջոց, որով խրախուսվում է ապրանքների արտահանումն արտասահման»²⁵։ Օրինակ՝ 1954 թվականին արևմտագերմանական «Հերմես» պետական ապահովագրական բնկերությունը Քուրբիային տրամադրեց 170 մլն. մարկ բիմիսիական ձեռնարկությունների սարքավորում ու նավեր զնելու համար։ Բայց Քուրբիայի պրեմիեր-մինիստր Ադենա Մենգերբեռի Բոննում վարած բանակցություններից Հետո 1954 թվականի դեկտեմբերին կնքվեց նոր առևտրախոն պայմանագիր, որի համաձայն Արևմտյան Գերմանիան վերոհիշյալ վարկի փոխարեն համաձայնվեց Քուրբիային տրամադրել 225 մլն. մարկ²⁶, որից 180 մլն. մարկը տրամադրեց պետությունը, իսկ մնացածը՝ մասնավոր բնկերությունները։ Վարկը տրամադրվեց Քուր-

բիային 4 տարի ժամանակով, տարեկան 7,8 տոկոսի հաշվով։ ԳՖՌ-ն միաժամանակ Քուրբիայից պահանջեց «նարավորություն տալ արևմտագերմանական մոնոպոլիաներին՝ մասնակցելու արտադրության միջոցների արդյունաբերությանը, որին Քուրբիան իսկույն համաձայնվեց։ 1955 թվականի սկզբներին արևմտագերմանական ֆիրմաները Քուրբիային նոր վարկ տրամադրեցին 100 մլն. մարկ գումարի շափով²⁷։

1958 թվականի հուլիսին Բոննի կառավարությունը որոշեց նոր վարկ տրամադրել Քուրբիային²⁸։ Բայց Արևմտյան Գերմանիայի այս քայլը լուրջ դիմադրության հանդիպեց ամերիկյան կառավարության կողմից, որոնք ձգտում են ամեն կերպ ուժեղացնել իրենց ազդեցությունը Քուրբիայի վրա։ Դրա փոխարեն, ԱՄՆ-ը հանդես եկավ Քուրբիային միտանական վարկ տրամադրելու առաջարկով։ 1958 թ. օգոստոսին արևմտյան երկրները որոշեցին Քուրբիային վարկ տրամադրել 359 մլն. դոլլար։ Այս վարկից 234 մլն. դոլլար տրամադրվեց ԱՄՆ-ի, 100 մլն. դոլլար՝ Եվրոպական Վճարման Միության և 25 մլն. դոլլար՝ Միջազգային վալյուտային ֆոնդի կողմից²⁹։

Ինչպես հետագայում հայտնի դարձավ, Եվ-

²⁵ Վ. Բ. Անին, *Ընտր երկր, 1951*, հատ. 22, էջ 322։

²⁶ „Handelsblatt“, 1956, 17 Februar.

²⁷ „Financial Times“, 1955, 10 august.

²⁸ „Vatan“, 1958, 29 temmuz.

²⁹ „La Tribune des Nations“, 1958, 5 septembre.

բուսական Վճարման Միության 100 մլն. գույքար վարկի կեսը՝ 210 մլն. մարկ, Քուրբիային տրամադրվեց Արևմտյան Գերմանիայի կողմից³³։ ԳՆՄ-ի պատվամենտի բյուջետային հանձնաժողովը պահանջում էր, որ այդ վարկը Քուրբիային տրամադրվեր միայն ու միայն երկրորդ համաշխարհային պատերազմի բնթացքում վերջինի կողմից բանադրաված գերմանական սեփականություններ վերագործնելուց հետո³⁴։

Սեփականություն հարցը Արևմտյան Գերմանիայի օգտին լուծվելուց հետո (տե՛ս էջ 74) բունդեստագը հաստատեց այդ վարկը։ 1960 թվականի սկզբներին Մենդերհար անձամբ ղիմեց Ադենաուերին նոր վարկ ստանալու հարցով։ Արևմտյան Գերմանիան որոշեց օգտվել այդ հանգամանքից, որպեսզի էլ ավելի ուժեղացնի իր դիրքերը Քուրբիայում։ Նույն թվականի մարտի 11-ին Անկարայում սկսվեցին բանակցություններ, որոնց բնթացքում բնարկվեց Քուրբիային արևմտագերմանական նոր վարկ տրամադրելու հարցը։ Վերջում բանակցող կողմերը ստորագրեցին համաձայնագրի, որի համաձայն Արևմտյան Գերմանիան համաձայնվեց Քուրբիային տրամադրել

վարկ 150 մլն. մարկի չափով։ Այդ վարկի երկու երրորդից ավելին Քուրբիան պարտավորվեց ծախել արևմտաեվրոպական մի շարք երկրներից գնումներ կատարելու նպատակով, իսկ մնացած մասը՝ ապրանքներ ներմուծելու համար միայն ու միայն Արևմտյան Գերմանիայից³⁵։ Ադենաուերը այդ վարկը Քուրբիային տրամադրեց առանց բունդեստագի հաստատման, որ նշանակում էր վերջինիս իրավունքների կոպիտ խախտում։ Նա ուղղակի կարգադրեց Վերականգնման-վարկային բանկին, Քուրբիային փոխանցելու այդ գումարը³⁶։

Այսպիսով 1960 թվականի կեսերին Արևմտյան Գերմանիայի տնտեսական «օգնությունը» Քուրբիային կազմեց 685 մլն. մարկ կամ ԱՄՆ-ից հետո նա զբաղվեց երկրորդ տեղը Քուրբիային արտասահմանյան տնտեսական «օգնություն» ցույց տալու ասպարեզում։ Մակայն ա ս հարցում պետք է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ ամերիկյան տնտեսական «օգնության» մոտ կեսը ծախսվում է Քուրբիայի սպաժանկանացման նպատակով, ստացվում է, որ Արևմտյան Գերմանիան զբաղվում է ստալինի տեղը Քուրբիային տնտեսական «օգնություն» ցույց տալու գործում։

³³ „Financial Times“, 1958, 28 november.

³⁴ Նույն տեղում, 1959, 3 december.

³⁵ „Zefter“, 1960, 8 nisan.

³⁶ „Neues Deutschland“, 1960, 31. Mai.

Քուրբ-արևմտագերմանական առևտրի ապա-
դան խիստ անհանգստություն է պատճառում
արևմտագերմանական և մոնոպոլիաներին, որոնք
մի կողմից չեն ցանկանում կորցնել իրենց դիրքի-
րը Քուրբական շուկայում, իսկ մյուս կողմից
հնարավորություն չունեն իրենց ցանկացած շա-
փով ու անմղերով շարունակել առևտուրը Քուր-
բիայի հետ: Արևմտագերմանական մոնոպոլիա-
ներին այս վիճակից փրկեց ԳՖՄ-ի կառավարու-
թյունը:

1956 թվականի օգոստոսի 29-ին Արևմտյան
Գերմանիայի ու Քուրբիայի միջև կնքվեց Քուր-
բիային զենքի ու զինամթերքի արտադրության
պատվեր տալու պայմանագիր 740 մլն. մարկ
գումարի շափով³⁷: Այդ միաժամանակ համապա-
աստիսանում է Բունդի կառավարողների սաղմա-
սակել քաղաքականութանը, որոնք ձգտում են մի

³⁷ Ի. Կեզ, Արևմտյան Գերմանիայի ու Քուրբիայի կա-
ռավարողներին վաղուց էր մասհողում արևմտագերմանական
բանակի համար Քուրբիայի տերիտորիայում զինամթերքի
արտադրության հարցը: Գեոեռ 1954 թվականի աշնանը
Քուրբիայի պրեմիեր-մինիստր Մենկերեդը ու կրուպը գազու-
նի քանակություններ վարչեցին ծանր հրազեն արտա-
դրող գործարանի շինարարության հարցի շուրջը: Տե՛ս
Կ. Микунский, Кошери Круппа, М., 1959, стр. 83.

կողմից թեթևացնել փոխադարձ վճարումները,
իսկ մյուս կողմից՝ արագացնել բունդեազների վի-
րազինումը: Պայմանագրին ուժի մեջ մտավ 1957
թվականի մայիսի 9-ին, երբ այն հաստատվեց
նաև Արևմտյան Գերմանիայի բունդեսապի կող-
մից: 1957 թվականի մարտին Արևմտյան Գերմա-
նիայի ռազմական մինիստր Շտրասուրը հատուկ
ուղևորություն կատարեց դեպի Քուրբիա այդ
պայմանագրի շուրջը վերջնական բանակցություն-
ներ վարելու համար:

Պայմանագրի համաձայն 1957 թվականի
մայիսին Արևմտյան Գերմանիան որոշում կա-
յացրեց Քուրբիային փոխանցել 255 մլն. մարկ
որպես կանխավճար³⁸: Այդ գումարի մի մասը՝
75 մլն. մարկ, Քուրբիան վերադարձրեց Արևմտ-
յան Գերմանիային՝ առևտրական պարտքի դի-
մաց, իսկ մնացած գումարով զենք սարքավորում
ու քիմիական հումք մեքենաշինության ու քիմիա-
կան արդյունաբերության պետական ընկերության
Էրբկայեի ռազմական գործարանի (Անկարայի
մոտ) համար, որը աչդ ժամանակվանից սկսեց
զինամթերք արտադրել: Պայմանագրի այն կետը,
որով Քուրբիան պարտավորվեց վարկի մի մասը
տրամադրել սարքավորման ու քիմիական հումքի

³⁸ „Milliyet“, 1957, 16 haziran.

զմանը, թեև պարզած էր հրուսպի կոնցերնի կողմից³⁹,

Գրանից Հետո Բոննի թուրքական դեսպանությունում բացվեց հատուկ բյուրո, որը հեռանում էր այդ պայմանագրի իրականացման ընթացքին: Բյուրոյի գեկափար նշանակվեց զինվորականին զինկրալ Արզուսար՝ դեսպանորդի աստիճանով⁴⁰:

Վերոհիշյալ պայմանագիրը ցնծությունը բնորոշվեց թուրքական կառավարողների կողմից, որոնք աչ ու ձախ զովեստներ էին շատյում Արևմտյան Գերմանիայի հասցիին, նշելով նրա բարեհոգի քայլն այդ պատվերը Թուրքիայում տեղադրելու հարցում: Թուրքական պաշտոնաթերթը «Չաֆերք» գրում էր, որ պայմանագրի կնքումով էրկու երկրների միջև եղած հարաբերությունները մտնում են զարգացման մի նոր փուլ:

«Հավադիս» թերթը չնայողեց այդ աթիվ գտնադարար հայտարարելու, թե «Այն հանգամանքը, որ Գերմանիայի (աշխիքն Արևմտյան Գերմանիայի—Մ. Հ.) նման արդյունաբերական բարձր մակարդակի հասած մի երկիր, իր բանակի կարիքները բավարարելու համար զիմում է Թուրքիային, խոսում է այն մասին, որ թուրքական արդյունաբերությունը զարգացման բարձր

աստիճանի է հասել»⁴¹: Այդ նույն թերթը շարունակում էր՝ «Գերմանա-թուրքական տրադիցիոն բարեկամությունը մեծ նշանակություն ունեցավ գերմանական կառավարության կողմից այդ կարեկար պատվերը թուրքական արդյունաբերությունը տալու հարցում»⁴²: Իսկ թուրքական մի այլ թերթ, այդ հարցին նվիրված իր հոդվածում ավելի հետևում գնաց, նա գրում էր՝ «Գլուղանտեսական բնույթ ունեցող մի երկիր առաջին՝ անգամ հնարավորություն ունեցավ իր արդյունաբերական արտադրանքը ուղարկել Գերմանիայի պես զարգացած երկրի: Մենք այդ գնահատում ենք որպես Թուրքիայի պատմության մեջ շահեմված տնտեսական հաղթանակ»⁴³: Այնինչ, իրականում, այդ պայմանագիրը կոչված էր թուրքական կոնոմիկան ավելի սերտ կերպով կապելու արևմտագերմանական սեանշիստների արտաքին ազդեցիվ բազարականության հետ: Այն բուրժուազիին էլ չի համապատասխանում ո՛չ գերմանական, ո՛չ թուրք և ո՛չ էլ նրանց հարեան ժողովուրդների արժատական շահերին, եվրոպայում խաղաղության պահպանման ու ամրապնդման շահերին:

Վերոհիշյալ պայմանագիրը շիթեացրեց Թուրքիայի արտաքին ևսևտրի զմխարությունն-

³⁹ „Recherches internationales à la lumière du marxisme“, 1958, juillet-août, p. 182.

⁴⁰ „Cumhuriyet“, 1957, 2 şubat.

⁴¹ „Sık“ „Ekonomi gazetesi“, 1957, 14 mayıs.

⁴² „Nüjün meşhureti“.

⁴³ „Nüjün meşhureti“, 1957, 21 mayıs.

բբ: Այդ իսկ պատճառով Թուրքական կառավարողները սկսեցին ուրիշ կերպ մտադրել:

Երկիրը արտաքին առևտրական գոյություններին զուրկ ընդունելու նպատակով նրանք ձգտում էին միանալ այսպես կոչված «Երեղճանուր շուկային»⁴⁴, նրանք հույս ունեին որ մանկուկ «Երեղճանուր շուկայի» մեջ, Թուրքիան հնարավորություն կստանա մեծ քանակությամբ դյուղանտեսական հումք և հանքային հանածոներ արտահանել դեպի այդ շուկայի մեջ մտնող երկրները: Փաստորեն Թուրքիան բնկեցելու է ավելի մեծ տնտեսական գոյությունների մեջ, որովհետև նա ստիպված է լինելու իր դոնոր քայքայ արևմտակա փողովան արդյունաբերության առաջ: Այդ իր հերթին կհանդեպնի տեղական ազգային արդյունաբերության փլուզմանը, քանի որ նա ի վիճակի չէ դիմադրելու իմպերիալիստական խոշոր մոնոպոլիաների մրցակցությունը:

⁴⁴ Եվրոպական տնտեսական համագործակցության կազմակերպության կամ «Երեղճանուր շուկայի» մեջ մտնում են ԳՏԾ-ն, Ֆրանսիան, Իտալիան, Բելգիան, Հոլանդիան ու կյուրեմբուրգը: «Երեղճանուր շուկայի» վերաբերյալ պայմանագիրն ունի մեջ մտավ 1958 թ. հունվարի 1-ին «Երեղճանուր շուկան» իրենից ներկայացնում է մի տնտեսական մոնոպոլիա, որի ներսում առանձնաբար վերացվելու են բոլոր ապրիքային մարքերը ու անցնելու են ազատ առևտրի, առանց որևէ սահմանափակման: «Երեղճանուր շուկան» ԱՄՏ-ի տնտեսական հավելույնն է:

Թուրքական կառավարությունն այս մտադրությունը ամեն կերպ քաջաբերվում է Արևմտյան Գերմանիայի կողմից: Եվ դա միանգամայն հասկանալի է: Նախ և առաջ, Արևմտյան Գերմանիան անենալով ուժեղ և ավելի դարդազած կոնոմիկա, քան իացի ԱՄՆ-ից, ՆԱՏՕ-ի մասնակից⁴⁵ և «Երեղճանուր շուկայի» մեջ մտնող մյուս երկրները, ամենից շատ կհաշի դրանից: Երկրորդ՝ Արևմտյան Գերմանիան արդեն զգալի դիրքեր ունի Թուրքիայի էկոնոմիկայում և «Երեղճանուր շուկային» վերջինիս միանալուց հետո նրա դիրքերը այստեղ ավելի կուժեղանան: Այդ իսկ պատճառով «Երեղճանուր շուկայի» մեջ մտնող երկրներից ստաջինը Արևմտյան Գերմանիան էր, որ էրճարգի Թուրքիա կատարած այցելության ժամանակ հայտարարեց, թե Արևմտյան Գերմանիան կպաշտպանի այդ շուկային միանալու Թուրքիայի ձգտումը⁴⁶: Աշտպիսով, արևմտադերմանական մոնոպոլիաների կողմից «Երեղճանուր շուկայի» օգտագործումը՝ իրենց դիրքերը Թուրքիայում էլ ավելի ամրապնդելու նպատակով, ոչ այլ ինչ է, քան նրանց վարած զազուրկային քաղաքականության գրեթե ամբողջական:

⁴⁵ Н. С. Хрущев, Разоружение—путь к упрочению мира и обеспечению дружбы между народами, «Правда», 15 января 1960.

⁴⁶ „Zafet“, 1959, 24 agosto.

Քուրբական մի շարք բնորոշման թաղաթափան գործիչներ ու թերթեր խիստ բնագատության ենթարկեցին Մենդելեևի կառավարության այդ մտադրությունը: Այնուամենայնիվ, 1960 թվականի հունվարին Քուրբական կառավարությունը հայտարարեց, որ մտադրություն ունի երկիրը միացնելու «բնդհանուր շուկային»:

Քուրբ-արևմտադերմանական առևտուրը, շահույթի մեծ ազդյուր է Արևմտյան Գերմանիայի համար: Էժան գներով Քուրբիայից ներմուծելով գյուղատնտեսական հումք ու հանքային հանածոներ, արևմտադերմանական մոնոպոլիաները գաժան շահագործման են ենթարկում Քուրբիայի բնական հարստությունները, աշխատավոր գյուղացիությանը ու բանվոր դասակարգին: Սակայն արևմտադերմանական մոնոպոլիաները կեղերում են Քուրբիայի աշխատավոր մասսաներին՝ երկրի հիմնական սպառողներին, նաև մոնոպոլ բարձր գներով արդյունաբերական ապրանքներ արտահանելու միջոցով: Արևմտադերմանական մոնոպոլիաների առևտրական ներխուժմանն աջակցում է Քուրբական միջնորդ առևտրական բուրժուազիան, որը նրանց հետ միասին մասնակցում է Քուրբիայի բանվոր դասակարգի ու աշխատավոր գյուղացիության շահագործմանը:

ԱՐԵՎՄԱԿԵՐԲԱԿԱՆ ՄՈՆՈՊՈԼԻԱՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԿԱՆ ԵՆՐԻՐՈՒՄՆԵՐԸ ՅՈՒՐԲԻԱՅՈՒՄ

Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջին թուրքական բուրժուազիան արդեն բավականաչափ հարստացել էր պետության միջոցով աշխատավոր մասսաներին շահագործելու, ինչպես նաև ֆաշիստական Գերմանիա ին գյուղատնտեսական հումք ու հանքային հանածոներ վաճառելու միջոցով: Մյուս կողմից, պետական կապիտալիզմի փաղաքականությունը սկսել էր կաշկանդել թուրքական բուրժուազիայի ալյատ գործարարական գործունեությունը: Ահա թե ինչու թուրքական պործարար շրջանները պատերազմից հետո սկսեցին ավելի համարձակ հանդես գալ հօգուտ ճառնավոր կապիտալի գործունեություն շրջանակների բնորոշական:

1946 թվականի սկզբներին Քուրբիայում ստեղծվեց նոր փաղաքական պարտիա՝ Գեմեկրասական պարտիան, որի հիմնական կորիզը ու ղեկավարությունը կազմված էր թուրքական առևտրական ու ֆինանսական բուրժուազիայի, կալ-

վածատիրության ու կուլակության ներկայացուցիչներին: Այս պարտիայի ծրագիրը պահանջում էր մասնավոր կապիտալին տրամադրել գործողության լայն ոլորտ ու ամեն կերպ խրախուսել նրա նախաձեռնությունը¹:

Ամերիկյան մանուկությանը, որոնք երկրորդ համաշխարհային պատերազմից հետո անհամեմատ ուժեղացրին իրենց էքսպանսիան կապիտալիստական ամբողջ աշխարհով մեկ, ամեն կերպ օգնեցին այդ պարտիային, քանի որ վերջինիս ծրագիրը ազատ հնարավորություն էր ընձեռում նաև օտարերկրյա մանուկիստական կապիտալի ներխուժմանը Քուրքիա՝ տեղական մասնավոր կապիտալի հետ համասար իրադրույթներով, այսինքն հենց այն, ինչ որ իրենք պահանջում էին: Գեմոկրատական պարտիային ցույց տված թուրքական և ամերիկյան բուրժուազիայի աջակցությունը մեծ նշանակություն ունեցավ 1950 թվականի մայիսի պառլամենտական ընտրություններում նրա հաղթանակի համար:

Իշխանության գլուխ անցնելով Գեմոկրատական պարտիան սկսեց վարել թուրքական ու օտարերկրյա մասնավոր կապիտալի աջակցման քաղաքականություն, որն արդյունաբերության

ընագավառում նրա վարած քաղաքականության հիմնական ուղղություններից մեկն էր:

Գեմոկրատական պարտիայի կառավարությունը մշակեց ցեմենտի ու շաքարի գործարանների, ինչպես նաև մի շարք այլ արդյունաբերական ձեռնարկութունների շինարարության պլան: Այդ նպատակով, ինչպես պետական ու մասնավոր, այնպես էլ միջան մասնավոր կապիտալի մասնակցությամբ յայտնող հիմնվեցին մի շարք նոր բանկեր ու բաժնետիրական ընկերություններ: Այսպես օրինակ՝ հիմնվեց «Քուրքիյե շեքեր ֆարիկալարի Անոնիմ Շիրքեթի» ընկերությունը պետական կապիտալի ու «Շըբանիլի» (Փորձարար բանկ) մասնակցությամբ: Հիմնվեց նաև «Քուրքիյե շիմենտո սանայի Անոնիմ Շիրքեթի» ընկերությունը 250 մլն. թ. լիրա դրամագլխով «Մշբանիկ», «Սուսերբանիկ» և «Շժյաքբանիկ» բանկերի մասնակցությամբ: Թուրքական կառավարությունը ձևափոխեց է նաև էլեկտրակայանների ու արդյունաբերական այլ ձեռնարկությունների շինարարություն երկրի տարբեր վայրերում: Թուրքական բուրժուազիան, ինչ խոսք, պարզ դիտակցում է, որ իր սեփական միջոցներով ինքն ի վիճակի չէ իրականացնելու վերահիշյալ շինարարությունը և միևնույն ժամանակ հաղթահարելու երկրի տնտեսական զմլարությունները: Թուրքական բուրժուազիան զիմում է օտարերկրյա կապիտալի օգնու-

¹ T. Tunaya, Türküyede siyasi partiler, (1859—1952), İstanbul, 1952, s. 667.

Ֆյանը, կապիտալ ներդրումների, սարքավորման, սլառենտների և տեխնիկական մասնագետների տրամադրման համար:

1951 թվականի օգոստոսի 1-ին թուրքական մեջլիսը ընդունեց № 5821 օրենքը՝ օտարերկրյա կապիտալի իրավասման մասին, որի հիմնական սկզբունքները առաջարկված էին ամերիկյան ու արևմտաեվրոպական մոնոպոլիաների կողմից: Այս օրենքի համաձայն, օտարերկրյա մասնավոր կապիտալն ազատ հնարավորություն ստացավ կապիտալ ներդրումներ կատարելու արդյունաբերության, կենդանիկայի, կապի, հասարակական աշխատանքների ու տուրիստական կազմակերպությունների բնագավառներում²: Օտարերկրյա կապիտալն իրավունք ստացավ ներդրման օրից 3—5 տարվա ժամկետը րանալուց հետո իր կապիտալները փոխադրել Քուրթիայից, իսկ շահույթները՝ ոչ ավելի քան ներդրված կապիտալից ստացված օտարական շահույթի 10%-ը:

Չնայած այն հանգամանքին, որ նախորդ ժամանակաշրջանի հետ համեմատած այս օրենքը որոշակիորեն բացում էր երկրի կենսամիկայի դոնոր օտարերկրյա մոնոպոլիաների առջև, այնուամենայնիվ կապիտալի և շահույթի փոխա-

դրմանը վերաբերող կետերը դժգոհություն առաջացրին Արևմուտքում:

1954 թվականի հունվարի 18-ին թուրքական մեջլիսը Բենեդոլլի³ միտիայի հանձնարարականների հիման վրա ընդունեց նոր օրենք օտարերկրյա կապիտալի իրավասման մասին, որի համաձայն, օտարերկրյա կապիտալ ներդրումներն այստեղ ոչնչով չեն սահմանափակվում: Այնուհետև, օտարերկրյա մոնոպոլիաներն իրավունք ստացան ցանկացած ժամանակ ու շահով արտասահման փոխադրել իրենց կապիտալը և շահույթները: Օտարերկրյա կապիտալը ստացավ հավասարազոր իրավունքներ անդակն կապիտալի հետ և այլն: Վերոհիշյալ օրենքի ընդունումից հետո ուժեղացավ օտարերկրյա, հատկապես ամերիկյան ու արևմտաեվրոպական մոնոպոլիատական կապիտալի ներխուժումը Քուրթիա:

Արևմտաեվրոպական մոնոպոլիաների կապիտալ ներդրումներին նախորդեց արևմտաեվրոպական բանկերի բաժանմունքների բացումը 1951 թվականին: Արևմտաեվրոպական «Ֆրեյնիշ Կեստֆալիշեր», «Նորդդոյչե» և «Չլուդդոյչե» բան-

² R. Cennat, Foreign Capital Investments in Turkey, Istanbul, 1954, p. 18.

³ Կլաոենա Բենեդոլլը ԱՄՆ-ի կոնգրեսի արտաքին անտեսական հանձնաժողովի նախագահն ու պրեզիդենտի ոչնական էր, որը 1953 թվականի օգոստոսին իր էրազմաների հետ ժամանեց Քուրթիա օտարերկրյա մոնոպոլիատական կապիտալի իրավասման օրենքի փոփոխման կապակցությամբ:

կերը, որոնք «Դոլլերբանկի» ժառանգորդներն են, բացեցին իրենց միացյալ բաժանմունքը Սաամբուլում: Բաժանմունքի գիրեկտոր նշանակվեց է. Գոյդենբերգը, որը նախկինում «Դոլլերբանկի» Սաամբուլի ժառանգյալի գիրեկտորն էր, իսկ այնուհետև՝ «Քուրթիլե կրեդի բանկայի» բաժանտիրական բնկերության գլխավոր գիրեկտորը¹: Քուրթիայում իրենց բաժանմունքները բացեցին նաև «Դրեզդեներ բանկ»², «Համբուրգի-կրեդիտ», «Ռեյն-Մայն», «Ռեյն-Ռուր» և «Քանկ Ֆուր Կանդել ունդ ինդուստրի» բանկերը: Քուրթիայում վերսկսել է իր գործարքները արևմտադերմանական ապահովագրական բնկերությունը, և վերահանդնվել են գերմանական այն ֆիրմաների իրավունքները, որոնք այստեղ գործում էին երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ:

Արևմտադերմանական մոնոպոլիաների կապիտալ ներդրումներին աջակցելու նպատակով 1954 թվականի մարտին Արևմտադերմանական հասուկ ուղեորություն կատարեց գերմանական Քուրթիայի նաև այդ հարցի շուրջը բանակցություններ վարեց Քուրթիական կառավարողների հետ: Բանակցությունների արդյունքում հետո հրատարակված կոմյունիկեիում նշվում էր, որ Քուրթիական կառավարությունը «մի-

ջոցներ կձևենարկի Քուրթիայի կապիտալ ներդրումներում գերմանական արդյունաբերության մասնակցությունն ապահովելու համար»:

Ինչպես նշում է «Նախքիտեն Ֆուր Աուսենհանդել» հանդեսը արևմտադերմանական մոնոպոլիաները Քուրթիան գիտում են որպես «իզուլացված դաշտ գործունեության համար»:

Արևմտադերմանական մոնոպոլիտական կապիտալը ակտիվորեն մասնակցում է արդյունաբերական շինարարությանը, ոչ թե Քուրթիայի անտեսական զարգացմանը աջակցելու, այլ իր շահույթն ապահովելու նպատակով: Այդ մասնակցությամբ վաճառահանման հարմար շուկայի ապահովումից բացի, Արևմտյան Գերմանիան ձգտում է Քուրթիայի արդյունաբերական զարգացմանը տալ իրեն հարմար ուղղություն և ընթացք: Արևմտադերմանական մոնոպոլիաները ջանք չեն ինչպես կատարվող ձևափոխությունների շահագործման գեղավարությունը իրենց ձեռքը վերցնելու նրանք մասնակցում են այդ շինարարությանը բաշ գիտակցելով, որ եթե աճ իրենց շահեն, ապա կանեն մյուս կապիտալիստական երկրները: Արևմտյան Գերմանիան հետապնդում է նաև մեկ ուրիշ կարևոր նպատակ. ամեն կերպ խանգարել Քուրթիայի ու սոցիալիզմի համաշ-

¹ „Handelsblatt“, 1954, 26 Juli.

² М. Бункина, Внешняя экономическая экспансия западногерманских монополий, М., 1958, стр. 54.

³ „Правда“, 23 марта 1954.

⁴ „Nachrichten für Aussenhandel“, 1954, 20 September.

խորհրդային սիստեմի տնտեսական համադր-
ժակցությունը:

Արդյունարհրական ձևերակոմիտեների շի-
նարարությունը մասնակցելու համար Քուրքիայում
հիմնվում են խաղը բաժնետիրական ընկերու-
թյուններ թուրքական մասնավոր կապիտալի ու
արևմտագերմանական ֆիրմաների, ինչպես նաև
արևմտագերմանական կապիտալի ու թուրքական
այն ընկերությունների հետ, որոնց գրամագուլթը
կազմված է քն՝ պետական և քն՝ մասնավոր կա-
պիտալից: Խաղը բաժնետիրական այդ ընկերու-
թյուններում արևմտագերմանական կապիտալի
մասնակցությունը, ըստ թուրքական օրենսդրու-
թյան, թույլատրվում է հիմնական գրամագուլթի
մինչև 51%-ի չափով: Արևմտագերմանական
ֆիրմաներն այդ ընկերություններին մասնակցում
են զլխավորապես գործարանային սարքավորման,
տեխնիկական մասնադետալների, սպառնականների ու
լիցենզիաների արժամատան, ինչպես նաև ձև-
նարկությունների զեկավորման ձևով: Միաժա-
մանակ հայտնի են զեկերեր, երբ արևմտագերմա-
նական մոնոպոլիաները գրադիմաց ստանում են
արդյունարհրական ձևարարությունների շահա-
գործմանը մասնակցելու իրավունք՝ համաձայն
տոկոսային պայմանավորվածություն: Հաճախ,
արևմտագերմանական ֆիրմաները հանդես են
գալիս որպես կապալառու: Հիմնված խառն ընկե-

րությունների հատկանշական զիծը այն է, որ
չբունը մեծ մասամբ կառուցում են ոչ մեծ ձև-
նարկություններ, որոնք համրի և պահեստամա-
սերի ապահովման տեսակետից կախման մեջ են
գտնվում հիմնական ֆիրմաներից, այսինքն՝ կա-
ռուցվող ձևարարությունները լրիվ արտադրական
չիկլ չեն ունենում:

Օտարերկրյա կապիտալի խրախուսման 1951
և 1954 թվականների օրենքների ընդունումից հե-
տո արևմտագերմանական մոնոպոլիաները թուր-
քայում կառուցել են մի շարք տարրեր արդյու-
նարհրական ձևարարություններ:

Օրինակ՝ «Քաղիշե Անիլին ունդ Սոդա ֆար-
րիկա Ա. Գ.» և «Ազոտ սանայի Քուրք Անոնիմ
Շիրքեթի» ընկերությունները հիմնեցին խաղը
բաժնետիրական ընկերություն Քյոթահայայում ա-
զոտի գործարան կառուցելու նպատակով (120
մլն. թ. լիրա)³: Այդ գործարանի շինարարությունը
սկսվեց 1955 թվականի հուլիսին ու վերջացավ
1958 թվականի վերջերին: Նրա տարրական արտա-
դրողականությունը կազմում է մոտ 120 հազար
տոննա ըրմիական պարարտանյութ: 1955 թվա-
կանի մայիսին հիմնվեց նաև «Սուսերրանկ-Ման-
նեսման Բոնու էնգուստրիսի Քուրք Անոնիմ Շիր-
քեթի» խաղը բաժնետիրական ընկերությունը 5,5

³ „Ekonomi gazetesi“, 1957, 22 օրակ.

³ „Chemische Industrie“, 1955, Juni, s. 310.

մին. Բ. լիբա գրամագլխով՝ «Սուսերրանկի» և «Մաննեսման» ֆիրմայի կազմից, Իզմիրում խոզո-
վակի դործարանի կառուցման համար: Գործա-
բանն արգեն հանձնված է շահագործման¹⁰: 1956
Բվականի նույն օրերին «Մաուրվերկի Զյուգվեստ-
ֆայեն Ա. Գ.» ու «Մարեմա վե բեմյա Էնչուստրիա
Կարումա» և «Մագեն Լուրդաշիլիք Բ. Ա. Ե.» բն-
կերտվածները հիմնեցին «Քուրք-Ալման Զելլեր
լիմիտեդ Եիրբեթի» բնկերտությունը՝ Քրքկալի
պողպատաձուլական գործարանի ընդլայնման
և պատակով Էնկերտության վերջնական դրամա-
պլուսը կազմեց մաս 2 մլն. մարկ. որի 49%-ը
շլաականում էր Թուրքական բնկերտություններին,
իսկ մնացածը՝ արևմտագերմանական ֆիրմային,
որը կապիտալ ներդրումը կատարեց պողպատա-
ձուլական սարքավորման ու մեքենաների արա-
մագրման ձևով: Քրքկալի գործարանի ընդլայն-
ման շնորհիվ բարձրորակ պողպատի արտադրու-
թյունն ավելացավ 2—3 անգամ, հասնելով տա-
րեկան մինչև 25 հազար տոննայի: Արևմտագեր-
մանական մեկ ուրիշ ֆիրմա՝ «Բենտելեր Վերկի
Ա. Գ.» Թուրքական «Մաուրիս-Էմեր Եիրբեթի»
բնկերտության հետ Ստամբուլում կառուցեց խոզ-
վակների գործարան: Այդ բնկերտությունը գրամա-
պլուսը կազմում էր 2 մլն. Բ. լիբա, որի կեսը

¹⁰ „Ekonomi gazetesi“, 1957, 11 subat.

արամագրվեց արևմտագերմանական ֆիրմայի
կազմից¹¹:

Արևմտագերմանական մոնոպոլիաները ակ-
տիվ մասնակցություն են օժնենում հատկապես
շաքարի ու ցեմենտի գործարանների շինարարու-
թյանը:

«Դոյչե Բերգվերկա ունդ Էլուստանբաու» ֆիր-
ման 1954 թվականին շաքարի գործարաններ կա-
ռուցեց Քոնյայում ու Ամասիայում¹²: Վերոհիշյալ
գործարանները օրական մշակում են 1800 տոննա
շաքարի ճակնդեղ: Նրանց շինարարության արժե-
քը կազմել է 32 մլն. մարկ: Այդ նույն ֆիրման
կառուցել է շաքարի գործարան Սուսուրյուկում և
Թուրդուրում¹³: Թուրքիայում շաքարի գործարան-
ներ են կառուցել նաև «Մաչինեն-Ֆարրիկեն Բյուվ-
կաու Ռ. Վոլֆ Ա. Գ.» և «Արգեն» ֆիրմաները Ադա-
պադարում, Աֆյոնում, Քյուսթա՛յաում և այլ վայ-
րերում:

Արևմտագերմանական ֆիրմաները Թուրքա-
կան կառավարությունից ստացան նաև ցեմենտի
12 գործարանի կառուցման պատվեր, այն պայ-
մանով, որ շինարարության ավարտումից հետո
մասնակցեն նրանց շահագործմանը: Ցեմենտի

¹¹ „Zafer“, 1954, 8 eyül.

¹² „Zeitschrift für die Zuckerindustrie“, 1955, 20
März, № 3, s. 124.

¹³ W. Uhrenbacher, Türkei, Berlin, 1957, s. 98.

գործարանների շինարարությանն արեմտագերմանական ֆիրմաները մասնակցեցին ֆրանսիական կադրերի հետ միասին: Համառոտ ներդրումները կազմում են 8 մլն. ֆ. լիրա¹⁴: Քունչիլերի ու Սարբայա զետի վրա Սարիերի էլեկտրակայանները ևս կառուցվեցին արեմտագերմանական մոնոպոլիաների կողմից:

Արեմտագերմանական մոնոպոլիստական կապիտալի մասնակցությունը վերջին տարիների բնթացքում Քուրբիայում կառուցվել են նաև պահածոների, էլեկտրասեխնիկական, գրասենյակային սիխուսյրների ու կահույքի, դուրսալիտի, զեղորայքների, էլեկտրական մարտկոցների, զիզել մեքենաների, պլաստմասսայի, սպակու, կղմինզրի, ֆլյոբի, ձկան պահածոների, կարելի և այլ գործարաններ:

Արեմտյան Գերմանիան եռանդուն մասնակցություն է ցուցաբերում նաև ճանապարհաշինության ասպարեզում: 1957 թվականի ղեկավարման ընթացքում Քուրբիայի երկաթուղային ճանապարհների գլխավոր վարչություն և Միմենս ունգ Հայսկեօ ֆիրմայի միջև ստորագրվեց համաձայնագիր Գերմանիա-Կայսերի-Քուրբայի-Ուլդադրյուս-Ուլդադրյուս-Ադանա երկաթուղագծի (620 կմ) վերանորոգման համար անհրաժեշտ սարքավորում մատակարարելու

մասին: Վերոհիշյալ երկաթուղագծի վերանորոգման աշխատանքները ավարտվեցին 1960 թվականի սկզբներին: Արեմտագերմանական ֆիրմաների կողմից կառուցվեց Սամսունի նավահանգիստը և վերանորոգվեց Սաամբուլ—Անկարա—Զոնգուլզակ երկաթուղայինը: Մի շարք ուղղման բազաներ՝ օդանավակայաններ, ավտոմոբիլային ճանապարհներ, նույնպես կառուցվել են Արեմտյան Գերմանիայի կողմից: 1956 թվականի վերջերին Քուրբիայում գործող արեմտագերմանական ֆիրմաների թիվը հասավ 33-ի¹⁵, իսկ նրանց կապիտալ ներդրումները՝ 18 մլն. մարկի¹⁶: Արեմտագերմանական մոնոպոլիստական կապիտալը Քուրբիայում գրավում է երկրորդ անգը թե այսօր գործող ֆիրմաների թվով և թե կադրիտայ ներդրումների գումարով, զիջելով միայն ամերիկյան մոնոպոլիաներին:

Արեմտագերմանական մոնոպոլիաների դիրքերն էլ ավելի ամրապնդելու նպատակ էր հետապնդում էր՝ Քուրբիայի ուղեորությունը գետի Քուրբիա 1959 թվականի օգոստոսին: Էրճարը այդ հարցի շուրջ Սաամբուլում բանակցություններ վարեց Թուրքիական կառավարության հետ: Բանակցող կողմերը հկան համաձայնության այն մասին, որ Արեմտյան Գերմանիան երկարաժամկետ վար-

¹⁴ „Investments in Turkey“, Washington, 1956, p. 177.

¹⁵ „Investments in Turkey“, . . . p. 177—179.

¹⁶ „Problèmes Economiques“, 1957, 25 juin, p. 12.

կերտվ մասնակցի Քուրբիայի կապիտալ ներդրումների հոսանք ալանին: «Ջաֆեր»-ի տվյալների համաձայն, այդ վարկերը կաղմելու էին 500—700 մլն. դրամ¹⁷: Կապիտալ ներդրումները կատարվելու էին հատկապես հանրային հարստությունների շահագործման մեջ:

Էրճարդը գրազվեց նաև թուրքական էկոնոմիկայի ֆինանսավորման ներքին աղբյուրների ուսումնասիրությանը: Նա առաջարկեց թուրքական կառավարությանը կրճատել կապիտալ ներդրումները արդյունաբերության այն ճյուղերի մեջ, ուր ունեն կապիտալի երկարատև շրջապտույտ, այսինքն կծկել ծանր արդյունաբերությունը:

Էրճարդը բացահայտ անշուժ գործադրեց թուրքական կառավարության վրա, որպեսզի վերջինս վերադարձնի երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ բռնադատված զեյթանական սեփականությունը: Եվ պետք է ասել, որ նրան հաջողվեց գրական արդյունքի հասնել այդ հարցում: Այսպիսով ստացվում է, որ արևմտազեյթանական մոնոպոլիստական կապիտալի ներդրումները Քուրբիայում միանգամից ավելացան ավելի քան 100 մլն. մարկով: Փաստորեն ստացվում է, որ Էրճարդի այցելության հիմնական նպատակը գերմանական սեփականության վերադարձումն էր:

¹⁷ „Zafer“, 1959, 24 agosto.

Էրճարդի այս ուղևորությունը նշանավորում էր արևմտազեյթանական մոնոպոլիստական կապիտալի Քուրբիա ներխուժման նոր էտապը: Կապիտալի վեր է, որ այդ ուղևորությունից հետո Արևմտյան Գերմանիայի դիրքերը Քուրբիայում ավելի պետք է ուժեղանան, նախորդ ժամանակաշրջանի համեմատությանը: Այն մի կողմից հանգեցնելու է նաև օտարերկրյա մոնոպոլիստների միջև մրցակցության ուժեղացմանը, իսկ մյուս կողմից կարող է նոր զգվարություններ առաջացնել Քուրբիայի էկոնոմիկայի ինֆնտրույն զարգացման ճանապարհին: Էրճարդի այցելությունը լուրջ անհանգստություն պատճառեց ամերիկյան ու անգլիական գործարար շրջաններին: Այդ մասին «Բիրմինգհամ պոստ» թերթը գրում էր. «Էրճարդի այցելությունը Քուրբիա, այստեղ հաստատեց այն համոզմունքը, որ Գերմանիան կարող է դուրս մղել Ամերիկային՝ Քուրբիային օգնություն սրամաղրելու հարցում»¹⁸:

Էրճարդի այցելությունը տարրեր կիրպ զնահատակեց Քուրբիայում:

Թուրքական կառավարողները մեծ հույսեր էին կապում նրա այցելությանը հետ, նշելով, որ Էրճարդի խորհուրդները, ոյն ավելի լավ գիտե Քուրբիայի տնտեսական դրությունը քան որևէ մեկը

¹⁸ „Birmingham post“, 1959, 8 september.

աշխարհում, կօքենն իրենց երկիրը «Մարդիկ պարտեզ» դարձնելունը՝ Նրանք նաև հույս ունենին, որ Արևմտյան Գերմանիան Քուրբիային «մեծ փոխառություններ» կտրամադրի և ամեն կերպ փառաբանում էին վերահիշյալ բանակցությունների արդյունքները, զրանք բնութագրելով որպես մի մեծ հաջողություն Քուրբիայի և հենց իրենց արտաքին անդեսական քաղաքականություն համար:

Հակառակ զրան, բնդդիմադիր ուժերի ներկայացուցիչներն ու մամուլը իրավամբ նշում էին, որ այդ բանակցությունները ոչ մի սեռալ օգուտ չտվեցին Քուրբիային, որովհետև Արևմտյան Գերմանիան հրաժարվեց Ֆրանկո և որ վարկ արամադրելուց և համաձայնվեց միայն մասնավոր կապիտալի նոր ներդրումներ կատարելու:

Ժողովրդա-սեպարտիկական պարտիայի այդ ժամանակվա զխավոր բարտուղար Կասրմ Գյուլեկը հանդես գալով Կարամյուրսելում ծաղրանքով նշում էր, որ «կատարությունը շատ բան էր սպասում գերմանական միջխտրից և, խհարկի առաջին հերթին, փող: Բայց էրհարդը փողից կարևոր խորհուրդներ բերեց, որոնց խմատար կայանում էր նրանում, որ աշխատանքները բնթանան պլանի ու ծրարդի համաձայն»¹⁹:

Ընդդիմադիր մամուլը էրհարդի բանակցու-

թյանների մասին հիարերան զրում էր նաև, որ վերջինս բանակցությունների ժամանակ հետադրնզում էր առաջին հերթին արևմտագերմանական մոնոպոլիաների շահերը: Այդ մամուլի ավյալների համաձայն, հա թուրքական կատարությունից պահանջեց էլ ավելի իջեցնել լիրայի արժեքը, որպեսզի ԳՑԽ-ն կարողանա էժան զնով ավելի շատ թուրքական գյուղատնտեսական սպարանքեր զնել կամ ինչպես զրում էր «Ակխ» հանդեսը որպեսզի, «էրհարդի հարյունակիցները կարողանան ավելի լծանագին սիգարետներ զնել»:

«Ուլուս» թերթի հաղորդման համաձայն, Արևմտյան Գերմանիան եվրոպական տնտեսական համադրծակցության կազմակերպության ու Միջազգային փալլատասին Ֆոնդի շրջանակներից զուրս Քուրբիայի հանդես ոչ մի պարտավորություն չվերցրեց²⁰: Այնուհետև թերթը շարունակում էր, թե էրհարդը հասկացրեց, որ Քուրբիան իր սնտեսական ծրարդի վերաբերյալ հախ պետք է ստանա արևմտյան երկրների հավանությունը, որից հետո միայն Արևմտյան Գերմանիան կմտածի՝ օգնել նրան, թե ոչ:

Ընդդիմադիր մամուլը միամտանակ նշում էր, որ էրհարդի այցելությունն նպատակը նոր շուկաների ու շահավեա սղզեցություն ոլորտների ա-

¹⁹ „Akşam“, 1959, 24 agosto.

²⁰ „Ulus“, 1959, 26 agosto.

պահովումն է արևմտադեմանական ու ուրիշ մո-
նոպոլիաների կապիտալ ներդրումների համար:
Այդ մամուլը նախագրուշացնում էր, որ Քուրբիայի
տնտեսական մերձեցումը արևմտյան երկրների
հետ կարող է կասեցնել երկրի տնտեսական զար-
գացումը ու իջեցնել ժողովրդի կենսամակարդակը:

Այստեղ հարկ է նշել, որ այն, ինչի մասին
նախագրուշացնում էր այդ մամուլը, արգեն տեղի
է ունեցել: Արևմտյան երկրների հետ տնտեսական
մերձեցման պատճառով Քուրբիայի տնտեսությունը
դժգոյում է անդում, և օրավուր իջնում է աշխա-
տավոր զանգվածների կենսամակարդակը: Քուր-
բական «Քիմ» հանդեսը հեղեանքով նշում էր, որ
այն ժառանգիտները, որոնք զբաղանքը հարցե-
րով լցրած գնում էին էրհարզի հետ հանդիպելու,
չէին էլ կասկածում, որ այդ հարցերի մեծ մասը
կմնա տունն պատասխանի, և սարք կերկնի ու
մուկ կծնի:

Արևմտադեմանական մոնոպոլիաները հա-
տուկ շահագրգռվածություն են ցուցաբերում նաև
Քուրբիայի հանրային հանածոների շահագործմա-
նը մասնակցելու հարցում: Դեռևս 1951 թվականին
նրանք բրտի հանրանյութի շահագործման իրա-
վունք ստացան Մոնղոլայի շրջակայքում²¹:

Մինչև 1954 թվականի մարտի 7-ի Քուրբիա-
յի նավթարդյունաբերության ապասպալանացման

ու օտարերկրյա կապիտալին նավթահետախույզա-
կան աշխատանքներ թույլատրելու մասին օրենքի
ընդունումը²², օտարերկրյա նավթային մոնոպո-
լիաների գործունեությունն այստեղ շնչին էր. այն
սահմանափակվում էր գլխավորապես նավթա-
մթերքների վաճառքով: Սակայն վերահիշյալ օրեն-
քի ընդունումից հետո արևմտյան երկրների նավ-
թային մոնոպոլիաները ուժեղ հոսանքով ներխու-
ժեցին Քուրբիա: Արդեն 1957 թվականի վերջերին,
օտարերկրյա 18 և տեղական երկու նավթային
ընկերություններ ստացել էին նավթահետախու-
զական աշխատանքների 200 թույլատույցուն
9.177.732 հեկտար տարածության վրա²³:

Նավթահետախույզական աշխատանքների թույ-
լատույցուն են ստանում նաև արևմտադեմանական
նավթային ընկերությունները: Առաջինն այդպիսի
թույլատույցուն ստացավ «Դեյլման Մոնտանո»
ֆիրման, 1954 թվականի վերջին: Ա.ս ընկերու-
թյունը նավթահետախույզական աշխատանքների
կոնցեսիա ստացավ Քրակիալում (Եվրոպական
Քուրբիա): Ընկերությունը ստացավ 4 կոնցեսիա
198,885 հեկտար տարածության վրա²⁴:

²² Վերահիշյալ օրենքը բեղունվել է ամերիկյան նավ-
թային մոնոպոլիաներ Մարրո-Մ. Բոլլի և Էլմեր Է. Քեաթերի
հանձնարարականների համաձայն:

²³ «L'Economiste d'Orient», 1958, 15 septembre, p.
1805.

²⁴ «Der Volkswirt», 1957, 7 September, s. 2008.

²¹ М. Бункина, там же, стр. 75.

1957 թվականի ամռանը այդպիսի թուլլովություն ստացավ նաև Պյոլլե Էրդուլ ֆիրման²⁵։ Վերջինս ստացավ նազիստական արևմտա-առաջնորդների ութ կոնցենտրոն շրջան՝ 390 հազար հեկտար ընդհանուր տարածությունով, զբաղեցրել էին զբոսայգիներ և սիրիական սահմանի մաս (Գրաբերիերից հարավ) և երկր՝ Սլոբոդին արևելք (Հարզանի ու Ռամանդադի մոտ)։ Արևմտադեմաստանական նազիստական մոնոպոլիաներն այստեղ արդեն ծավալել են լայն հետախուզական աշխատանքներ։ Այս փաստերն ակնհայտ կերպով վկայում են այն մասին, թե արևմտադեմաստանական մոնոպոլիստական կապիտալը ինչպիսի վճարակառիվներ է ցուցաբերում և հետև գնացող ինչ շահագիտական նպատակներ է հետապնդում Մերձավոր և Միջին արևելքի, հատկապես Քուրդիստանի, նազիստական հարստությունների շահագործման ուղղությամբ։

Հայտնի է, որ առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում գերմանական ինդիստրիալիզմը, հանդիսանալով Անդլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի ուժեղ գրեմադրությունը, զրկված էր Մերձավոր և Միջին արևելքի նավթի շահագործմանը մասնակցելու հնարավորությունից։ Ահա թե ինչու մենք հատկապես շեշտեցինք արևմտադեմաստանական

նազիստական մոնոպոլիաների ներխուժումը Քուրդիստան, որպես մի նոր երևույթ՝ Մերձավոր և Միջին արևելքում նրանց վարած հաղթանակողական չազարականությունը։

ԿՐՈՊՊԵ ԿԱՆՅԵՐԸ ԹՈՒՐԿԻԱՅՈՒՄ

Քուրդիստան իրենց գործունեությունը ծավալող արևմտադեմաստանական մոնոպոլիաներից առաջին ակտիվը Կրուպպի կոնցենտրն է։ Վերջինս անցյալում ունեցել է իր շահերը Քուրդիստանում, սկսած դեռևս XX դարի սկզբներից, երբ նա զենք ու զինամթերք էր արտահանում Քուրդիստան և շարունակում արգյունաբերական ձեռնարկություններ կառուցել մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակը։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո վերականգնելով և այնուհետև ընդարձակելով իր սազմաարգյունաբերական հզորությունը, Կրուպպի կոնցենտրն ստեղծեց ակտիվ գործունեություն ծավալել արտաքին շուկաներում, այդ թվում նաև Քուրդիստանում։ Քուրդիստան կատարվող գործունեությունը սերտ օրարկամական կապեր հաստատեցին հատկապես Կրուպպի հետ։ Ամեն անգամ, Արևմտյան Գերմանիայում եղած ժամանակ, նրանք իրենց սպարտակառույցներն են համարում այցելել Էսսենի մոտ գտնվող «Հյուբել» վիլլան՝ Կրուպպի բնասնիքի գլխավոր ռեզիդենցիան, գրում է գերմանական հայտնի պրոպրետարիատի Կ. Նորդհեյմը²⁶։

²⁵ „Erdöl und Kohle“, 1957, № 10, s. 720.

²⁶ „Правда“, 23 ноября 1954.

Դեռ ալիջին, Թուրքական կառավարությունն իր ներկայացուցիչն ունի Կրուսպի ֆիրմային կից²⁷, որպիսի պրակտիկա երբեք չի կիրառվել արտասահմանյան մոնոպոլիաների նկատմամբ:

Նախորդ գլխում մենք արդեն նշեցինք, թե արևմտագերմանա-թուրքական առևտրի բնույթի վրա ինչպիսի մեծ ազդեցություն է գործում Կրուսպի կոնցերնը: Մակայն Կրուսպի կոնցերնի շահերը Թուրքիայում չեն սահմանափակվում միայն արտաքին առևտրական շրջանակներում:

Կրուսպի կոնցերնը մեծ շահադրվածություն է ցուցաբերում Թուրքիայի հատկապես հանքային հանածոների շահագործման հարցում: Արդեն 1955 թվականի օդոտատյան Կրուսպի կոնցերնի ու Թուրքական «էմիրանի», «Սումերրանկ», «Իշրանկ» ու «էմլյար-վե-կրեդի բանկ» բանկերի միջև հիմնվեց «Մադեն արամ մէ էայուդ լիմիտեդ շիրքեթի» խառը բաժնետիրական բնկերությունը 1 մ. թ. իրա քաղաքում գրամավազում²⁸, Կրուսպի բաժինը կազմում էր բնկերության դրամագրի 20%²⁹, սարքավորման մատակարարման ձևով: Այս բնկերությունը հիմնվեց կենք տարի ժամկետով և գրավում էր հանքային հանածոների հետախուզական աշխատանքներով, այն նպա-

տակ ուներ հույսով ապահովել Թուրքիայի երկրորդ մետալուրգիական կոմբինատի պահանջները: Բնկերությունը գրավում էր նաև այդ կոմբինատի շինարարության նախապատրաստական աշխատանքներով, իսկ հետախուզական աշխատանքները սկսեց էգեշան ծովի ափին: Վերջերջայլ բնկերության կանոնադրությունը նախատեսում էր նաև, որ հանքային հանածոների հայանարկումից ու կոմբինատի շինարարության տեղը որոշելուց հետո, այդ նույն բաժնետերերը կհիմնեն նոր խառը բնկերություն 400 մլն. թ. իրա դրամագրի խով մետալուրգիական կոմբինատի շինարարության ու շահագործման համար: Բնկերության կանոնադրության ստորագրման արարողության ժամանակ Կրուսպի կոնցերնի ներկայացուցիչն իր հայտարարության մեջ նշեց, որ «մեր համադրժակցությունը բխում է երկու երկրների յուրահատկությունից: Գերմանիայի ու Թուրքիայի էկոնոմիկան փոխադարձաբար լրացնում են միմյանց»:

1956 թվականի գեկանմերի վերջին Կրուսպի կոնցերնը հիմնեց երկրորդ խառը բաժնետիրական բնկերությունը հանքային հանածոների հետախուզական աշխատանքների համար: Այս անգամ, բնկերությունը հիմնվեց «էմիրանի» հետ Ելու-գադի շրջանում նոր հայանարկում վոլֆրամի հանքերի շահագործման նպատակով: Կրուսպի կոնցերնը հատուկ ուշադրություն է դարձնում

²⁷ Yeni Sabah, 1957, 14 ekim.

²⁸ W. Uhlenbacher, ibid., s. 118.

²⁹ K. Mukhyatskay, там же, стр. 104.

վոլֆրամի հանքերի շահագործման վրա միայն ու միայն այն պատճառով, որ վոլֆրամը խիստ անօրոշակ է Արևմտյան Գերմանիայի բարձրորակ պողպատի արտադրության գործում: Ամերիկյան աղբյուրների համաձայն, Կեսարիայի գործարար մարդկանց մի խումբ խնդրել էր Կրուպպին, երկաթահանքերի մոտ գտնվող աճիխ պաշարները ստղպատի արտադրության համար օգտագործելու մի նախադիմ կազմել:³⁰

1957 թվականի ընթացքում Կրուպպի կոնցերնի ներխուժումը Քուրթիա ափիկի ակտիվացումը որին մեծ չափով աջակցեց Հենց իր Կրուպպի աշխույժունք: Կրուպպը Քուրթիա ժամանեց 1957 թվականի մայիսին, համաձայն պրեմիեր-մինիստր Ադնան Մենգըրեի 1955 թվականի և ուղղակի մինիստր Նիլմ Մենդերեի 1957 թվականի հրամարմին: Այդ աշխույժության ժամանակ Կրուպպը կազմվեց Կարաբյուք, Ալեքսանդրեոսա, (Իսթենդեյուլ), Կեսարիա, Էսքիշհիթ, Քոնյա, Ադանա, Մերսին, Բերգամա, Իզմիր, Բուրսա, Վան, Անկարա և Սոսմարուլ քաղաքներում: Նա հանդիպումներ ունեցավ Քուրթիական կառավարության ու պետության ղեկավար գործիչների, գործարար շրջանների հետ: Այդ ընթացքում քննարկվեցին Կրուպպի կոնցերնի գործունեության ընդարձակման հարցերը: Քուրթիական կառավարողների ու գործա-

րար շրջանների հետ Կրուպպը բանակցություններ վարեց վոլֆրամի, բարածի ու բրոմի հանքերի շահագործման, ջերմամալի կառուցման, էզրեմիատի մոտ երկրորդ մետալուրգիական կոմբինատի, Բուֆորի վրա կառուցելի կառուցման ու ղեկյի իրականացման սահմանը ձգտող երկաթուղագծի շինարարության և ուրիշ հարցերի շուրջը: Բանակցություններն ընթացավ Կրուպպի, որ Կրուպպի կոնցերնը ստացավ արդյունաբերական ձեռնարկություններ կառուցելու մի շարք նոր պատվիրակներ: 1957 թվականի մայիսի 18-ին Կրուպպի ու Քուրթիական կառավարության միջև ստորագրվեց համաձայնագիր Կարաբյուքի մետալուրգիական կոմբինատի 3-րդ դոմնային վառարանի կառուցման վերաբերյալ, այն հաշվով, որ կոմբինատի տարեկան արտադրողականությունը կազմի 750 հազար տոննա պողպատ: Այդ նույն օրը Կարաբյուքում տեղի ունեցավ նոր դոմնային վառարանի շինարարությունը սկսելու արտոդույթունը, որի ժամանակ Կրուպպը ղրեց Հիմիթ առաջին ալյուրը³¹, Բայյ շուսուվ, ալյ սլատվերը Քուրթիական կառավարությունը հանձնեց «Ջայյգիտուսի ինդուստրի բաու» և «Դեմադ» ֆիրմաներին³², Այդ աշխատանքներն արդեն մոտ են ավարտմանը:

³¹ «Ekonomi gazetesi», 1957, 19 mayıs.

³² «БИКИ», 19 августа 1958, Приложение № 9, стр. 54.

Այնուհետև, Քուրբիայի երկաթուղային ճանապարհների գլխավոր վարչությունը Կրուզյայի Հետ սկզբունքային համաձայնության եկավ 80 մլն. դոլլար արժեքով Քուրբիային երկաթուղային սարքավորում վաճառելու մասին: Այդ սարքավորումը օդատարովիչու է Մուշ-Վան-Կոթուր (460 կմ) ճանապարհի շինարարության նպատակով: Հայտնի է նաև, որ Կրուզյայը մտադիր է Վանա լճի վրա, Տաթվանից մինչև Վան լաստանավ աշխատացնել: Այդ սարքավորումը վաճառվելու է թուրքական բրտի մատակարարումների դիմաց: Կրուզյայի կոնցերնը ստացավ նաև Իզմիրում շարքով թզթի պորժարանի շինարարության պատվերը, որը տարեկան արտադրելու է 20 հազար տոննա թուղթ: Երկարարության արժեքը կազմելու է 7 մլն. թ. լիրա²⁵, Կրուզյայի ու Քուրբիայի միջև նախնական համաձայնություն ձևեր բերվեց նաև Բուրսայի շրջանում վոլֆրամի հանքերի համառեղ շահագործման մասին²⁶, Քուրբիական կառավարությունը Կրուզյային հանձնեց վեց ցեմենտի պորժարանի շինարարության ու մոնտաժման պատվերը²⁷:

Էդրեմիտի մոտ կառուցվող մետալուրգիական կոմբինատի շինարարության պատվերը նույնպես հանձնվեց Կրուզյային: Կոմբինատի տարեկան ար-

տադրանքը կազմելու է 600 հազար տոննա պողպատ, իսկ շինարարության արժեքը կկազմի 400 մլն. թ. լիրա: Բոններ Հետազայում թուլլաստրեց այդ վարկը տրամադրել Քուրբիային²⁸:

Իր իսկ հայտարարության համաձայն, Կրուզյայը մտադիր է մասնակցել նաև սինթետիկ մանրամթի ու նավթամթր պորժարանների և Բոսֆորի վրա կամուրջի շինարարությանը և այլն: Ի դեպ, անհրաժեշտ է նշել, որ Կրուզյայի կոնցերնը վաղուց էր ձգտում ստանալ Բոսֆորի վրա կամուրջի շինարարության պատվերը: Դեռևս 1953 թվականին ամերիկյան մամուլը հաղորդում էր, որ Քուրբիական կառավարության համար Կրուզյայը պետք է միացնի Բոսֆորի օտերը, դերմանական մի ճարտարապետի կողմից նախագծված մեկ մղոն երկարության ունեցող կախովի կամուրջով, որի շինարարությունը կարժենա 70 մլն. դոլլար²⁹:

Շուտով Քուրբիա ժամանեցին Կրուզյայի մասնագետները: Բոսֆորի վրա շուրս հենարանով երկաթբետոնե կամուրջի կառուցման հարցերով դրազվելու համար Այդ մասնագետների հայտարարությամբ, իրենց նախագիծն ալիլի էժան ու հաստատուն է, քան կախովի կամուրջի շինարարության ամերիկյան նախագիծը: Սակայն

²⁵ „Cumhuriyet“, 1957, 5 haziran.

²⁶ „Cumhuriyet“, 1957, 29 mayis.

²⁷ „BHKH“, там же, стр. 51.

²⁸ „Middle East Economic Digest“, 1958, 5 december, p. 39/2.

²⁹ „New-Republic“, 1953, 14 december, p. 10.

ինչպես հետազայում հայտարարեց Կրուպյոր, այդ կամուրջի շինարարությունը հետաձգվում է, որովհետև այն դժվար կլինի իր համար:

Իսկ նազիթաթոր զործարանի շինարարության կապակցությամբ Կրուպյոր հայտարարեց, որ մտադիր է այդ զործին մասնակից դարձնել նաև ամերիկյան կապիտալին, բանի որ ինքը կարող է ներդրել միայն 190 մլն. մարկ³⁹: Այնուհետև Քուրցիա ժամանեցին Կրուպյորի կոնցերնի մասնագետները վոլֆբրամի ու ածխի հանքերի շահագործման հարցերն ուսումնասիրելու նպատակով, իսկ մեքենաշինության ու քիմիական արդյունաբերության բնկերությունը Կրուպյորի հետ համաձայնվեց վերադադարատման համար տեխնիկական մասնագետներ ուղարկելու հարցում:

Բանակցությունների արդյունքներին նվիրված մամուլի կոնֆերանսում էր Կրուպյորի հարցրին, թե նա ինչ է ցանկանում Քուրցիային, նա ուղղակի հայտարարեց, որ ինքը ցանկանում է, որ Քուրցիան «գնա գյուղատնտեսական հումքի և հանքային հանածոների նկատմամբ Արևմտյան Փերմա-նիայի աճող պահանջները ալիքի լայն բազարաբերու ճանապարհով»⁴⁰: Իսկ Կրուպյորի կոնցերնի

³⁹ „Recherches Internationales à la lumière du marxisme“, 1958, № 8, juillet-août, p. 182.

⁴⁰ „Zafer“, 1957, 1 haziran.

կառավարիչ Հանսա Կուներ իր հերթին հայտարարեց, որ Քուրցիան իրենից ներկայացնում է իդեալական վայր կոնցերնի զբոսնունելության համար⁴¹: Ինչպես տեսնում ենք, Կրուպյոր և իր կառավարիչը ալիքի հետոն դնացին, քան ուրիշները, որոնք առհասարակ սրտում են արևմտագերմանական մոնոպոլիաների շահագրտական նպատակները Քուրցիայում:

Վերջերս հայտնի դարձավ նաև այն, որ Կրուպյորի ֆիրման ձեռնարկել է երկաթահանքերի հետազոտական աշխատանքներին, Իզմիրի և Ալեքսանդրեաուայի շրջաններում⁴²: Քուրցիական մամուլի հաղորդման համաձայն, Կրուպյոր մտադրություն ունի Քուրցիական կառավարության ու մասնավոր կապիտալի մասնակցությամբ այստեղ կառուցելու արդյունաբերական ձեռնարկություններ 1 մլրդ. մարկ արժողությամբ⁴³:

Եթև Կրուպյորի հաջողվի իր նախատեսած կապիտալ ներդրումների թեկուզ կեսն իրագործել, ապա կատացվի որ նա ալիքի ուժեղ դիրքերի տեր կդառնա Քուրցիայում, բան արևմտագերմանական բոլոր մյուս մոնոպոլիաները և նույնիսկ ամերիկյան մոնոպոլիաները միասին վերցրած:

Կրուպյորի կոնցերնը գերմանական մոնոպոլիաների

⁴¹ „Journal d'Orient“, 1957, 27 octobre.

⁴² „L'Asie Nouvelle“, 1959, mars, p. 69.

⁴³ „Milliyet“, 1957, 19 mayıs.

յարդէն պատճառել է բազմաթիւ դժբախտութիւններ, որովհետեւ այն հանդիսանում է երկու հումաշխարհային պատերազմները սանձազերծող գերմանական մոնոպոլիաների պարագլուխը:

Կրտսւպի կոնցերնի գործունեութեան ընդարձակումը Քուրթիայում վերջինիս ուղղակի լծում է արեւմտադերմասկան ուղղմանը՝ մոնոպոլիաների ռազմականութիւն, ու Քուրթ ժողովրդի բոխոր կազմում Արեւմտեան Գերմանիա ռեանչիստներին արկածախնդրական քաղաքականութեան հետ:

Այն, որ օտարերկրյա ու հատկապէս արեւմտադերմասկան կապիտալը Քուրթիայում կառուցելու է մի շարք արդյունաբերական ձեռնարկութիւններ, զեւ բոլորովին չի նշանակում, թէ կիսովի երկրի գյուղատնտեսական բնույթը, այն կգառնա արդյունաբերական ինքնուրույն երկիր ու կազաւալի, օտարերկրյա կապիտալի ազդեցութեւնից: Ստարերկրյա կապիտալի ներխուժման հետեանքը արդէն սկիզբ առ է. Քուրթիան ավելի ու աւելի է ենթարկւում նրա շահերին ի վնաս Քուրթ ժողովրդի ու Քուրթիայի ազգային շահերին, նրա անտեսական ու քաղաքական անկախութեան շահերին:

Արեւմտեան Գերմանիան թափանցում է նաև Քուրթիայի գյուղատնտեսութեան մէջ: Այս կապիտալիստական տեղին է հիշել, որ արեւմտադերմասկան մոնոպոլիաները վաղուց են նպատակ դրել

հաստատելու իրենց գերիշխանութիւնը Քուրթիայի գյուղատնտեսութեան, աշխիքն նրա անտեսութեան հիմնական էջուղի վրա:

«Վիրշաֆտըզդինեստ» հանդեսը պատասխանելով այն հարցին, թէ Քուրթիայի անտեսութեան սր էջուղի մէջ առավել շատ հնարավորութիւններ կան կապիտալ ներդրումներ կատարելու համար, անտեսութեան մի շարք էջուղիի հետ միտարն շեշտում էր նաև գյուղատնտեսութիւնը⁴³:

1957 թվականի մայիսի 6-ին Քուրթիայի մէջ լիար ընդունեց № 6963 օրենքը արեւմտադերմասկան գյուղատնտեսական օրինակելի-ցուցադրարան անտեսութեանների կազմակերպման մասին:

Այդ օրենքի համաձայն Քուրթական կազմը արամադրում է հողային տարածութիւններ օրինակելի անտեսութեանների համար: Վերջիններս ազատվում են ընկերութիւններից դանձաղ, ինչպէս նաև կառուցաների, հողային, գերբային ու ուրիշ հարկերից: Հարկերից ու մարտերից ազատվում են նաև անտեսութեանների կազմից ներմուծվող ապրանքները⁴⁴: Քուրթական մամուլի հազորչութեան շահաձայն նախատեսվում է նաև, որ օրինակելի անտեսութեանները կհիմնվեն արեւմտադերմասկան օրինակով: Արեւմտեան Գերմանիան պարտաւորվեց Քուրթիային տրամադրել իր

⁴³ Yves Fanchon et Maurice Léruth, *ibid*, p. 86.

⁴⁴ „T. C. Resmî gazete“, 1957, 14 mayıs, s. 17076.

պիտական հետազոտությունների արդյունքներն ու մեթոդները, ինչպես նաև գյուղատնտեսական տեխնիկա⁴⁵: Պայմանագրի համաձայն, պետք է ստեղծվեն հրեք այգյախի տնտեսություն և բացվեն դասընթացներ գյուղատնտեսական մասնագետների պատրաստման համար:

Արևմտազերմանս-թուրքական օրինակելի կուցադրական առաջին տնտեսությունը հիմնվեց Գյունեի մոտ՝ Մարմարյա ծովի ափին⁴⁶, Այդ տնտեսությունն Արևմտյան Գերմանիայից արդեն բաացել է գյուղատնտեսական մեքենաներ ու ցե-տային անասուն:

Այդ նույն թվականի հուլիսի 31-ին Թուրքիայի գյուղատնտեսության մինիստր էսազ Բուղազօղլուն օրինակելի տնտեսությունների գիրեկտոր Ռեմզի Այուզզերի ու Անկարայի Գյուլագնտնտեսական ինստիտուտի գիրեկտոր Նեժատ Բերմենի ուղեկցությամբ մեկնեց Արևմտյան Գերմանիա, վերջինի գյուղատնտեսությունը ծանոթանալու նպատակով:

Կազմակերպելով իրենց օրինակելի տնտեսությունները Թուրքիայում արևմտազերմանական մոնոպոլիաները հետապնդում են հետևյալ նպատակը՝ շահագրգռել Թուրքիային իր գյուղատնտեսությունը ավելի մեծ ուշադրություն դարձնելու:

